

Հ. ՍԱՂԱԲՅԱՆ

ԿԵՐԱԽՈՏԵՐԻ  
ՄՃԱԿՈՒՄԸ

633

Լ-20



21 JUN 2013

633  
5-20 *պ.*

24 SEP 2010

Հ. ՄԱՂԱՔՅԱՆ

Կ Ե Ր Ա Խ Ո Տ Ե Ր Ի  
Մ Ձ Ա Կ Ո Ւ Մ Ը

15982  
9001  
1006  
RCP



ԳՅՈՒՂԷՐԱՏ

1934

ՅԵՐԵՎԱՆ

ՄՄՄ 936

### ԿԵՐԱՍՈՑԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Սորհրդային Միութեան յուրաքանչյուր աշխատավորի, յուրաքանչյուր կոլտնտեսականի և խորհուրդատեսութեանների յուրաքանչյուր բանվորի համար այժմ արդեն բավականաչափ պարզ է, վոր այն դժվարութեանները, վորոնք գոյութուն ունեյին հացի նկատմամբ, վերացված են և անվերադարձ կերպով թողնված են անցյալին:

Կոմունիստական կուսակցութեանը խորհուրդատեսութեանների և կոլտնտեսութեանների շինարարութեամբ լուծել է հացահատիկային պրոբլեմը և հերթի յի դրել անասնաբուժութեան պրոբլեմի լուծումը: Մեր արդյունաբերութեան արագ աճումը, բանվոր դասակարգի և գյուղացիութեան նյութական վիճակի բարելավումը զգալիորեն բարձրացրին անասնաբուժութեան արտադրանքի պահանջը: Սակայն մեզ մոտ անասնաբուժութեան զարգացումը ժողովրդական տնտեսութեան մյուս ճյուղերի զարգացումից խիստ հետ է մնացել: Կոլտնտեսային և խորհուրդատեսային անասնաբուժութեան ամենաարագ զարգացման գործում ամենազլխափոր դերը խաղում է կերի հարցի լուծումը: Կերի հարցը կազմում է սոցիալիստական անասնաբուժական տնտեսութեան հիմքը: Չի կարելի հոտի ընդլայնման հույս ունենալ՝ առանց նրան բավականաչափ կերով ապահովելու: Չի կարելի անասունների արտադրողականութեանը բարձրացնել, յիթե մենք նրանց չկերակրենք:

Անասնապահութեանը Սորհրդային Հայաստանում

Պատ. խմբագիր՝ Ս. Խաչատրյան  
Թարգմ. Գ. Վասիլյան  
Լեզվ. խմբագիր՝ Լ. Հարությունյան  
Սրբագրիչ՝ Ե. Այվազյան  
Հանձնվել է ապագրութեան 9 մարտի 1934 թ.  
Ստորագրվել է ապագրիչու 28 մարտի 1934 թ.  
Գլխավոր № 202, Գատիկը № 208, Տիրամ 2000  
ԳՅՈՒՎԿՐԱՏԻ ՏԳԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ՆԱԿԱՆԴՅԱՆ 50, ԿՆՌ. № 94

մինչև այժմ դեռևս կերի սուր պակաս է զգում: Մեր տնտեսութուններն առանձնապես ձմեռվա կերի սուր կարիք են զգում: Մինչև այժմ մսուրային կերի համար գլխավոր նյութը տալիս են բնական խոտհարքները, վորոնց տարածութունը Հայաստանում հասնում է մինչև 100.000 հեկտարի: Սակայն իրենց այդ փոքր տարածության հետևանքով բնական խոտհարքները մեր սոցիալիստական տնտեսութունները խոտով ապահովել չեն կարող: Մյուս կողմից, բնական խոտհարքների բերքատվութունը չնչին է, վորը բացատրվում է նրանց ներկայիս վատ վիճակով: Նրանք պատռած են մամուռով, մամռակալած թմբերով և մոլախոտերով:

Կերերի մյուս աղբյուրը դաշտային խոտացանութունը դեռևս բավարար չափով ընդլայնված չէ: Արմատապտուղներն ու սիլոսը տնտեսության մեջ սկսել են մուտք գործել միմիայն վերջին տարիներս: Ներկայումս առհասարակ ուժեղ կերերի (թեփի, քուսպի և այլն) պակաս է զգացվում: Ուստի անհրաժեշտ է կերեր բազա ստեղծելու միջոցառումների վրա հատուկ ուշադրութուն դարձնել:

Պետք է ամբողջ տարվա ընթացքում անասուններն ունենան բավականաչափ կեր — ամառը լավ և առատ արոտ, իսկ ձմեռը բազմազան և սննդարար կերեր: Դաշտային խոտացանութունը տվյալ ետապում զարգացող սոցիալիստական անասնաբուծության համար հանդիսանում է ձմեռային կերերի եյական աղբյուրներից մեկը:

Խոտացանության դերն առանձնապես մեծ է Հայաստանի չորային շրջանների գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Բազմամյա

խոտերը լավագույն նախորդներ են հանդիսանում տեխնիկական, հացահատիկային և գյուղատնտեսական այլ մշակույթների համար: Բազմամյա խոտերի հսկայական նշանակութունն այն է, վոր նրանք ընդունակ են շատ կարճ ժամանակամիջոցում ստեղծելու հողային կառուցվածքը և վերականգնելու դաշտային հողի կորցրած հատկութուններն ու պտղավետութունը: Բազմամյա արմատապտուղների ցանքը նպաստում է դաշտերը մոլախոտերից մաքրելուն, վորոնք սաստիկ պակասեցնում են դաշտային մշակույթների բերքը, սաստկացնում են յերաշտը և պակասեցնում հողի խոնավութունը: Վերջապես, խոտացանութունը տալիս է հրաշալի կերանույթի (խոտ, սիլոս, հատիկ և այլն) բարձր բերք և խոտացանութուն կիրառելի մեկ հեկտարից ստացվող խոտի բերքն ավելացնում է առնվազն 3—4 տնգամ, իսկ կերի բազա ավելացնել՝ նշանակում է անասնաբուծական կուտնտեսութուններում անասունների քանակն ավելացնել, հետևապես և անասնաբուծական պրոդուկտը լուծել:

Սույն փոքրիկ գրքուկի նպատակն է կուտնտեսային և խորհրտնտեսային լայն մասաներին ծանոթացնել այն ամենալավագույն կերախոտերի մշակման տեխնիկային, վորոնք չափազանց մեծ նշանակութուն ունեն դաշտային մշակույթի մեջ: Այդ բույսերից մի քանիսը Հայաստանի դանազան շրջաններում վաղուց արդեն մշակվում են, իսկ մյուսները մեզ համար հանդիսանում են իբրև նոր բույսեր, վորոնք սոցիալիստական սեկտորի տնտեսութուններում կերային կայուն բազա ստեղծելու գործում ունեն մեծ նշանակութուն:

### ՅԱՆՈՎԻ ԱՌՎՈՒՅՏ (ՅՈՆՁԱ)

Առվույտը սկիզբ է առել կենտրոնական Ասիայում և հանդիսանում է հնագույն կերարույտ: Քնյերը և սկսվել նրա մշակումը, ձիշտ վորողված չե, այնուամենայնիվ նրա մշակմամբ պարսիկներն զբաղվել են մեր դարաշրջանից դեռևս մի քանի դար՝ վոչ պակաս քան 2500 տարի առաջ: Ներկայումս առվույտի մշակույթը տարածված է արասասանմայան բոլոր յերկրներում և առանձին զարգացման է հասել Ամերիկայում, ուր նա ցանվում է հսկայական տարածությունների վրա և այլ կերախոտերի շարքում առաջնագույն տեղերից մեկն է գրավում:

Հայաստանում հեղափոխությունից առաջ առվույտը մշակվում էր պիսպորայես Չանգեզուրի և Դարալագյազի կալվածատերական և կուլակային հողերում: Ցարական կառավարության, կալվածատերերի և կուլակների կողմից հարստահարվող պուղացիական մանր տնտեսությունները միանգամայն հնարավորությունից զուրկ ելին իրենց հողերում առվույտի ցանք մացնելու և հեղափոխությունից ոտաջ առվույտի մշակույթը յերկրի շրջանների մեծ մասին անհայտ եր: Հեղափոխությունից և քաղաքացիական պատերազմից հետո առվույտի համար հատկացված տարածությունն սկսում է արագորեն ընդարձակվել և ներկայումս Հայաստանում առվույտը գրավում է կերախոտերին հատկացված ամբողջ տարածության վոչ պակաս քան 75%<sup>0</sup> ը: Այգ մշակույթի նշանակությունն անասնաբուծական խորհանտեսությունների ու կուլտեսությունների համար հսկայական է: Առվույտը Հայաստանի չորային

շրջանների անասնաբուծական տեսակությունների կերային բազան վորակական և քանակական տեսակետից խիստ արմատական փոփոխության է յենթարկելու:

Բույտի նկարագրույթունը.—Ցանովի կամ սովորական առվույտը բազմամյա բույս է՝ ուժեղ և յերկաբ հիմնական արմատով, վորի յերկարությունը մշակման սովորական պայմաններում հասնում է 2—3 մետրի, իսկ խիստ ցամաքային պայմաններում հողի խորքն է տարածվում վոչ պակաս քան 15 մետր յերկարությամբ: Ունի 70—120 սանտ. յերկարության հասնող խիստ ճուղավորված բազմաթիվ ցողուններ. տերևները յերեք թևանի յեն, մանր, սակայն բազմաթիվ. ունի մախրապույն, շուշանագույն, մանիշակագույն կամ կարմրավուն փնջածե ծաղիկներ: Լոբապտուղը բազմասերմանի յե և ունի զսպանակի ձև, վորը 2—3 պտույտ է գործում: Մերմերը մանր են, յերկարավուն, փոքր ինչ ներս ընկած, դեղնագույն, մուգ կամ կարմրավուն: Առվույտի արմատներն աճելով կարճանում են, վերով արմատավզիկը քաշվում է հողի խորքը: Այս հանգամանքն առվույտի համար ունի հսկայական նշանակություն. հողի խորքը քաշվելով, արմատավզիկը դրանով իրեն պաշտպանում է ցրտերից ու վլասատուններից: Առվույտն էլ, այլ լոբազղի բույսերի նման, ավիլացնում է հողի միջի աղուտի պաշարը, մի հատկություն, վոր պուղաանտեսության համար խիստ արժեքավոր է: Հոյն աղտուով հարստանալու յերեւոյթը մշտապես կապված է լոբազղի բույսերի արմատների վրա բազմաթիվ պալարիկների գոյության հետ: Վերջիններս լըցված են բակտերիաներով, վորոնք հավաքում են ողի

մեջ յեղած ազոտը և տալիս են բուսին: Այսպիսով առվույտը լորադղի այլ բույսերի նման ունի այն ար-  
ժեքավոր հատկութունը, վոր հողի ազոտի պաշարը շատացնում է, ուստի և նա հանդիսանում է տեխնի-  
կական, հացահատիկային, և այլ մշակույթների լավա-  
գույն նախորդը:

Կլիմայի յեվ հողի նկատմամբ ինչ պահանջ ունի.  
Յանովի առվույտը տաք կլիմայի բույս է: Մակայն և  
ախպես նա կարող է դիմանալ մինչև իսկ 20<sup>0</sup>-ի հաս-  
նող անձյուն սառնամանիքների: Հայաստանում առ-  
վույտը լավ դիմանում է նույնիսկ Լենինականի մինչ-  
և 30<sup>0</sup>-ի հասնող սառնամանիքներին: Բարձր ջերմաս-  
տիճանի կլիման ել առվույտին չի վնասում: Շոգ և չո-  
րային կլիմայական պայմաններում, արհեստականորեն  
բավականաչափ լավ վտոռգվելիս, առվույտը լավ է բուս-  
նում, սակայն ավելորդ խոնավութունը նրա վրա  
անբարենպաստ ազդեցութուն է գործում: Հայաստանի  
ցածրադիր շրջաններում առվույտը վտոռում և պահան-  
ջում: Մեծ նշանակութուն ունի ստորերկրյա ջրերի  
խորութունը: Յեթե ստորերկրյա ջրերը յերկու մետ-  
րից ավելի բարձր են, այդ հանգամանքն անբարե-  
նպաստ ազդեցութուն է ունենում առվույտի վրա: Առ-  
վույտի համար լավագույն հող են համարվում խորը,  
ջրաթափանց, կավա-ափողախառն կամ ավաղակավա-  
խառն հողերը՝ ջրաթափանց, խորն ստորահողով և մինչ-  
և 4—5<sup>0</sup>/<sub>10</sub> կիր պարունակող սևահողերը կամ շագանա-  
կազույն հողերը: Առվույտը հողի նկատմամբ առանձ-  
նահատուկ պահանջներ չունի: Նա չի բուսնում միայն  
ճանճային, թթու, խիստ աղի և ծանր կավային հողե-  
րում,

Հայաստանի սահմաններում ջրովի առվույտի մշա-  
կույթի համար ամենաբարենպաստ շերտը համարվում է  
արաքսի յերկարությամբ՝ Արփա-Չայի գետաբերանից  
դեպի արևելք, մինչև Նախիջևանի հանրապետութունը  
և Զանգեզուրը՝ մոտավորապես մինչև Մեղրին  
հասնող շերտը: Յերևանից մինչև Քելշըջյանդ՝ վե-  
րևի կողմում փոքր ինչ դեպի արևելք ընկնող նա-  
խալեռնային շրջանը համարվում է առվույտի տեղա-  
կան մշակույթի հնագույն շրջաններից մեկը: Առվույտի  
մշակույթի նույնպիսի հին ոջախ է համարվում նաև  
Զանգեզուրը: Լենինականի սարահարթը՝ հողի և վտոռգ-  
ման հնարավորության տեսակետից, առվույտի մշակույ-  
թի համար միանգամայն հարմար է, սակայն վեգետա-  
ցիոն շրջանի կարծությունը հնարավորություն չի տա-  
լիս այստեղ 1—2 անգամից ավելի հունձ ունենալու,  
մինչդեռ վերոհիշյալ շրջաններում հնարավոր է 4—5  
անգամ հունձ ունենալ: Սևանա լճի ավազանում (Բա-  
սարգեչարի սարահարթում) առվույտի մշակումը հնա-  
րավոր է վտոռելով: Առվույտ կարող է բուսանել նաև  
Հայաստանի բոլոր անտառային շրջաններում (Իջևանի,  
Դիլիջանի, Ծամշաղիինի, Ալլահվերդու և այլ շրջանե-  
րում):

Կերային յեվ սննտակա ն ածեեր.— Տնտեսության  
մեջ առվույտը գլխավորապես գործադրվում է խոտ  
ստանալու համար: Ժամանակին հնձված և լավ չորա-  
ցրած առվույտը լավագույն և սննդառատ խոտ է տա-  
լիս: Նախքան ծաղկելը՝ հնձված առվույտն իր մեջ պա-  
րունակում է մինչև 23<sup>0</sup>/<sub>10</sub> սպիտակուցային նյութեր և  
մինչև 3<sup>0</sup>/<sub>10</sub> ճարպ: Առվույտը հնձելու լավագույն ժա-  
մանակը համարվում է նրա ծաղկելու սկիզբը: Ավելի

ուշ հնձվածը տալիս է վատ վորակի խոտ և հաջորդ անգամների հնձի բերքը պահասում եւ նայած կլիմայական պայմաններին՝ սովուլյտի հունձների քանակը լինում է խիստ բազմազան։ Հայաստանի ցածրադիր տաք շրջաններում, արհեստական վոտգման դեպքում, սովուլյտը հնձվում է 5—6 անգամ, ավելի բարձր ցուրտ շրջաններում տալիս է 2 հունձ, իսկ տեղ-տեղ ել նույնիսկ 1 հունձ (Սևանի ավերում)։ Սովուլյտի տարեկան ընդհանուր բերքը նույնպես զգալիորեն տարբեր է, նայած թե քանի անգամ է հնձվում։ Հայաստանում սովորաբար բերքը սատանվում է մեկ հեկտարում 5-ից մինչև 10 տոննի սահմաններում։ Հայաստանում մինչև այժմ ամենամեծ բերքը մեկ հեկտարից հասնում է 18 տոննի (Չանգեզուր)։ Սովորաբար առաջին տարին առվույտը յերկու անգամից ավելի չի հնձվում։ Յուրա շրջաններում յերբեմն առաջին տարին բոլորովին հունձ չի տալիս։ Յերկրորդ տարվանից սկսում է նորմալ քանակի հունձ տար։ Առվուլյտն ամենատառա բերքը տալիս է իր կյանքի առաջին 3—4 տարին, իսկ 7—8-րդ տարին բերքն սկսում է զգալիորեն պակասեր։

Սովորաբար սովուլյտի դաշտերն ունենում են 6—10 տարվա կյանք։ Վորքան հողային պայմանները լավ են, այնքան սովուլյտն ավելի յերկար կյանք է ունենում։ Սովուլյտի կյանքը խստորեն կարճացնում է նրա Վրա անասուններ արածեցնելը և նրա ցանքի նկատմամբ յեղած վոչ բավարար խնամքը։ Հողի լավագույն պայմաններում, տաք կլիմայի և լավ խմամքի դեպքում, սովուլյտը Հայաստանում կարող է ունենալ 20—30 տարվա կյանք։

Առվուլյտը վորպես արոտախոտ շատ քիչ է ոգտա-

գործվում։ Արոտի համար դիմացկուն չի և շատ տրածեցնելիս արագորեն նոսրանում եւ Ուստի առվուլյտատեղերի (յոնջատեղերի) արոտն անհրոժեշտ է կատարել՝ պահպանելով ուցիտնալ կերպով արածեցնելու կանոնները (վոքը ծանրաբեռնում և այլն)։

Առվուլյտի վրա առանձնապես վատ է անդրադառնում վոչխարների արոտը։ Անասուններին խոնավ սովուլյտի վրա արածեցնելիս և բացառապես թարմ սովուլյտով մեծ քանակությամբ կերակրելիս, նրանց վոքըն ուռչում է (չիվանդանում են տիմպանիաով)։

Հողի պատասխաբյուեր ցանքի համար.— Հողն սովուլյտի ցանքի համար լավագույն կերպով պատրաստելու հիմնական պայմանը իոր աշտանավարն է։ Առվուլյտի համար կատարվող վարի նորմալ խորությունը պետք է համարել 20—25 սանտիմետր։ Ավելի յերես վար կատարելու դեպքում սովուլյտի բերքատուլությունը խիստ կերպով ընկնում է։ Գարնանը ճյուեր հալչելուն պես դաշտը ցաքանում են։ Յաքանից ուշացնել չի կարելի, վորովհետև հողը յերեսից չորանալով՝ սովուլյտի ծիլերի նորմալ զարգացում տեղի չի ունենում։

Հողի պարարտացումը զգալիորեն բարձրացնում է սովուլյտի բերքը։ Աղբային պարարտանյութերը (հեկտարին 35—40 տոննի չափով) ավելի լավ է մտցնել վոչ թե սովուլյտը ցանելուց առաջ, այլ դաշտն ուշանոր հերկելու ժամանակ։ Առվուլյտի վրա լավ են ներնործում նաև հանքային պարարտանյութերը (ցիանամիդը, սուպերֆոսֆատը և այլն)։

Յանք.— Առվուլյտի ցանքը պետք է ըստ հնարավորության կատարել վաղ գարնանը։ Այդ անհրոժեշտ է մանավանդ չորային շրջաններում, ուր հոճախ շատ



չոր գարունն և լինում: Առվույտը ցանելու յեղանակները խիստ բազմազան են. նա ցանվում և շաղացան, շարքով և լայնաշարք: Հայաստանի պայմաններում շատ դեպքերում հողի խորթուբոթ մակերեսը և խիստ քարքարոտությունը թույլ չեն տալիս մի այլ տեսակի ցանք կատարելու, բացի շաղացանից: սակայն այնտեղ, ուր հնարավոր և շարքացան կատարել, այդ պետք և անել: Որտա չորային շրջաններում մինչև 49—50 սանտ. արանքներով կատարված լայնաշարք ցանքը հրաշալի արդյունք և տալիս կունային, ցուրտ շրջաններում առվույտը կարելի յե ցանել ծածկող բույսի (վարսակի կամ գարու) հետ:

Ծածկող բույսերի հետ ցանք կարելի յե կատարել նաև ջրովի առվույտի մշակության դեպքում. իսկ չորային շրջաններում, անջրդի մշակման դեպքում, առվույտն անպայման ցանվում և առանց ծածկող բույսի, վորն այդպիսի պայմաններում առվույտի դարգացմանը խիստ արգելք և հանդիսանում և նրա բերքատվությունը ցածրացնում և:

Առվույտի սերմերը շատ խորը չպետք և ցանվեն, վորովհետև նրանք շատ մանր են: Բայականաչափ խոնավության դեպքում ցանելու խորությունը 1—2 սանտիմետրից ավելի չպետք և լինի, սակայն չորային կլիմայի պայմաններում այդ խորությունը պետք և հասցնել մինչև 4 սանտիմետրի: Բավականաչափ խոնավ հողում շաղացան կատարելիս՝ պետք և մեկ հեկտարում ցանել 28—30 կիլոգրամ սերմ, իսկ մոլախոտերով խիստ պատած հողերում՝ մինչև 50 կիլոգրամ: Չորային պայմաններում անհրաժեշտ և ցանքի նորման զարձանել 15—18 կիլոգրամ: Առանց վոռոգման լայնա-

շարք ցանք կատարելիս՝ հեկտարին հարկավոր և 6—8 կիլոգրամ սերմ, վոռոգման դեպքում՝ 16—24 կիլոգրամ: Շարքացան կատարելիս մեկ հեկտարին անհրաժեշտ և 22-ից մինչև 24 կիլոգրամ:

Ցանքի խնամք.—Մեծ բերք ստանալու համար անհրաժեշտ և առվույտի ցանքի վերաբերյալ ունենալ սխտեմատիկ խնամք: Ամենից առաջ—ցանելուց հետո հողի յերեսը կեղև առաջանալու դեպքում՝ անհրաժեշտ և այդ կեղևը տափանով կամ թեթև ցաքանով փշրել, քանի վոր առվույտի ծիւրն ի վիճակի չեն ինքնուրույն կերպով կեղևը փշրելու: Իր դարգացման սկզբում առվույտը մոլախոտերից շատ և վախենում, ուտի անհրաժեշտ և մոլախոտերը սխտեմատիկ կերպով քաղհանել՝ շաղացանի և շարքացանի դեպքում քաղհանը կատարել ձեռքով, լայնաշար ցանքի դեպքում՝ հատուկ տեսակի մեքենաներով—կուլտիվատորներով: Առվույտի հետագա խնամքը կայանում և նրանում, վոր ամեն սարքի ցանքը գարնանը 2—3 անգամ ցաքանվում և, ցաքանումը հողը փխրեցնում և առվույտի դարգացմանը ուժ և տալիս: Կարելի յե թեթև կերպով ցաքանել նաև հնձելուց հետո: Ցաքանելու համար դործ են անվում «Ձիզգազ» կոչված սովորական ցաքանները:

Հայաստանի պայմաններում՝ առվույտի մշակման հիմնական հարցը նրա արհեստական վոռոգման հարցն և: Հայաստանի ամբողջ ստորին հարթավայրի և չոր նախալեռնային մասերում՝ առվույտի մշակությունը վոռոգման կարիք ունի: Վորպեսզի վոռոգման ջրերն առվույտի վրա հաջող ներգործություն ունենան, անհրաժեշտ և վոր ջուրը դաշտում տարածվի համահավասար կերպով, առանց լճակներ և առվակներ առաջաց-

նելու, ինչպես և առանց ջրաղուրկ տեղեր թողնելու: Ջրի լճացումը առվույտի բերքի վրա վատ և անդրադառնում: Նայած կ'իմայական պայմաններին և ստորերկրյա ջրերի խորությանը, առվույտի ջրիլու քանակն ամբողջ վեգետացիոն շրջանում կարող և հասնել 2-ից 15 անգամի:

Առվույտի հուճը.—Առվույտը հնձելիս ամենաֆիզնական պայմանն այն և, վոր նրա ամենաարժեքավոր մասը—տերևները չթափվին: Առվույտը հնձելու լավագույն ժամանակը համարվում և նրա ձողկելու ակիդբբ: Հունձը պահանջում և ուշադրություն և նախազգուշություն: Շոգ յեղանակին, յերբ հնձած առվույտը շարքերում թողնում և, պետք և փոցխելով կիտել և մի քանի ժամից հետո փոքրիկ կույտեր պատրաստել: Իսկ այդ կույտերից առանց կորուստ ունենալու կազմել դեղեր: Խորհանտեսությունն ու կոլտընտեսությունը, յեթև առվույտի ճիշտ ցանք կատարելուց և նրա նկատմամբ լավ խնամք ունենալուց հետո անուշադիր հունձ կատարեն, մշակման մեջ դրված ամբողջ միջոցներն ու աշխատանքը ի դուր կկորցնեն: Սերմ ստանալու համար ամենից լավ և թույնել յերկրորդ կամ յերրորդ բերքը: Սերմը պետք և հալաքել պտուղը սևանալուց հետո: Սերմի բերքը մեկ հեկտարից սովորաբար հասնում և 3—4 ցենտներին, սակավ դեպքերում ավելի: Նայած հանգամանքներին, առվույտի ոգտագործման ամբողջ ժամանակաշրջանում կարելի յի ստանալ սերմի 1, յերբեմն և 2 բերք: Այս հանգամանքը բացատրվում և նրանով, վոր սերմերը խիստ թուլացնում են բույսը, և դրանից հետո առվույտի բերքառվությունը սաստիկ իջնում և: Առվույտը

սերմի լավ բերք և տալիս իր կյանքի 3—4 տարին ներում: Սիրմնաբուծական տնտեսություններում կարելի յի առվույտ ցանել նաև հատկապես սերմ ստանալու համար: Դրա համար պետք և կատարել յայնաչար ցանք: Այս ձևի ցանք կատարելու դեպքում առվույտն իր ցանվելու յերկրորդ տարին արդեն բարձր բերք և տալիս:

Անհրաժեշտ և հիշել, վոր առվույտի արագ կերպով աճումը և նրա բազմահնձությունը պահանջում և, վոր առվույտի խոտը դաշտից կրվի ավելի արագ, հակառակ դեպքում դաշտում յերկար ժամանակով նրստած կույտերի և դեղերի տեղերի առվույտի բերքառվությունը պակասում և:

Առվույտի վնասատուները.—Առվույտն ամենից շատ տուժում և կուսկուտա (պատասուկ) կոչվող մակաբույձ (պարազիտային) բույսից: Կուսկուտան սկզբում զարգանում և ինքնուրույն կերպով, այնուհետև կըպչում և առվույտի ցողունին և նրա հյուսիք ծծում: Կուսկուտայով վարակված դաշտում արտաքուստ յերկվում են դանազան մեծության դեղին բծեր: Կուսկուտայի դեմ պայքարելու միջոցները գլխավորապես հետևյալներն են. չպետք թույլ տալ, վոր առվույտը ցանելու ժամանակ նրա սերմերի մեջ թեկուզ չնշին քանակությամբ կուսկուտայի սերմ լինի: Հոգեողկումատի նորմաներով առվույտի 1 կիլոգրամ սերմը 10 հատից ավելի կուսկուտա չպետք և պարունակել: Միջատներից առվույտին վնասել կարող են՝ 1) մարգագետնաթիթեռ, սրա դեմ պետք և պայքարել փարիզյան կանաչ սրսկելով: 2) առվույտի ուտիչը (СОВКА), վորի դեմ պետք և պայքարել փարիզյան կանաչ կամ միջակախառն թթու կալցիում սրսկելով:

### ԿՈՐՆԳԱՆ (ԵՍՊԱՐՅԵՏ)

Կորնդանը Հայաստանի դաշտային մշակույթի մեջ մեծ նշանակություն ունեցող չափազանց կարևոր կերակրատեղից մեկն է: Հայաստանի մի շարք շրջաններում (Նոր-Բայազետի, Քեշիշքենդի, Փաշալի) վաղուց նա մեծ չափով մշակվում է: Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմի ժամանակ կորնդանի մշակույթն սկսել է պակասել, սակայն ներկայումս նրա կուլտուրան վերականգնվում է, և կորնդանը սոցիալիստական սեկտորի բաղձաթիվ տնտեսություններում, ի թիվս այլ կերպարույաների, մեծ տարածություններ է գրավում:

Բույսի նկարագրությունը.— Ցանովի կորնդանը բազմամյա բույս է, վորի գլխավոր արմատը բարենպաստ պայմաններում մինչև 10 մետր յերկարություն տարածվում է հողի խորքը: Ունի բաղձաթիվ ուղիղ ցցված ցողուններ, 60—100 սանտիմետր յերկարությամբ: Ունի բարդ, փետրաձև տերևներ, վորոնք բաղկացած են յերկարավուն տերևիկներից: Ունի բազմերանգ վարդագույն-կարմիր ծաղկեփունջ, վորը նրստած է յերկար ծաղկակոթի վրա: Պտուղը միասերմանի յե, նրա փակված միասերմանի լորսպտղի վրա մեկ կողմից կա ծակող կատար. պտուղը պատած է փայտե ամուր պատյանով և ունի խոշոր սերմ:


Կեցային յեվ սննետական արժեքը.— կորնդանը գլխավորապես խոտհարքի բույս է: Նա մեծ մասամբ տալիս է մեկ հունձ, սակայն բարենաջող պայմաններում կաբող և տալ նաև յերկու և նույնիսկ յերեք հունձ: Ժամանակին հնձված կորնդանի խոտը հրաշալի կեր

է և իր մեջ պարունակում է մինչև 19% սպիտակուցային նյութ: Համեմատած այլ լորսպտղի բույսերի հետ նա այն առավելություն ունի, վոր նրանից ուտելիս կենդանիների փորը յերբեք չի ուռչում:

Կորնդանը հողի նկատմամբ շատ պահանջկոտ չէ: Նա կարող է աճել ամենատղքատ և քարքարոտ հողերում: Նրա հիմնական պահանջն այն է, վոր հողը և ստորահողը լինեն փխրուն: Հողի փխրությունը կորնդանին անհրաժեշտ է, վորպեսզի նա իր արմատները խորը կերպով տարածի հողի տակը: Կորնդանին յերբեք ցանկալի չէ, վոր ստորերկրյա ջրերը իրեն մտախի լինեն և ամուր, կավային ու ծանր հողերում լավ չի բուսնում: Նրա ամենաարժեքավոր հատկությունն այն է, վոր նա հողի մեջ յեղած մեծ քանակությամբ կրին դիմանալու ընդունակ է: Վատ է աճում աղի հողերում:

Կորնդանը յերաշտին ամենից դիմացկուն խոտերից մեկն է: Նա կարող է առանց արհեստական վտուղման հաջողությամբ մշակվիլ այնպիսի պայմաններում, ուր սակավ խոտավությունից ցանովի առվույտի բերքը խիստ պակաս է լինում: Հասունացած կորնդանը սառնամանիքներին լավ է դիմանում: Իրենց պարզացման առաջին տարում, ցրտից խիստ կերպով տուժում են նրա ծիլերն ու մատուց բույսերը, այդ պատճառով էլ աշնանը կորնդան ցանելը ձեռնառ չի: Կորնդանը շատ յերկարակյաց բույս է: Բարենաջող պայմաններում և լավ խնամքի դեպքում նա լավ դրություններ է առանց նոսրանալու մնում և մինչև 20 տարի, 8—12 տարվա դոյությունը կորնդանի համար սովորական յերեույթ է: Այդպիսի յերկարակեցության հետևանքով կորնդանը,

159001  
ԲՇԲՄ



բացի ցանձառջրջանառութեան մեջ մացնելուց, կարող է ցտնվել նաև ցանձառջրջանառութունից առանձնացված հողերում:

Կունգան ցանկելու տեսիլից.—Նկատի ունենալով, վոր կորնգանի ծիլերը մոլախոտերից հաճախակի զնասվում են, ամենից լավ է այն ցանել շարքահերի բույսերից հետո: Պարարտացումը կորնգանի բերքատվութունը խիստ բարձրացնում է: Կորնգանի համար կատարվող հողի վարը առվույտի վարից վոչնչով չի տարբերվում: Պահանջվում է խորն աշնանավար, վորին պետք է հաջորդի գորնան ցաքանումը: Անհրաժեշտ է մեկ հեկտարի վրա շաղացանով գցել 180-ից մինչև 240 կելոգրամ սերմ, իսկ շարքացանի գեպքում՝ 120-ից մինչև 180 կելոգրամ: Հայաստանի պայմաններում կորնգանի աշնանացան կատարելը ձեռնաու չե, վորովհետև անձյուն ձմեռները կորնգանը կարող է սառնամանիքներից զնասվել: Ամենալավը վաղ գարնանացանն է: Սերմերը գցվում են 3—4 սանտիմետր խորութամբ, ավելի խորը ցանք կատարել թույլատրելի չե թեթև հողերում: Կորնգանի ծիլերը դուրս են գալիս ուշ, 15—20 որվա վրա: Անհրաժեշտ է սկզբում կատարել ծիլերի քաղհան, վորովհետև կորնգանի ծիլերը մոլախոտերից վախենում են: Աճելով, հետագայում խիստ կորնգանը մոլախոտերից չի վախենում և ինքր հաջող կերպով նրանց խեղդում է: Մեծ մասամբ կորնգանը տալիս է մեկ հունձ, բարեհաջող պայմաններում՝ յերկու հունձ, բացառիկ գեպքերում լինում է յերեք հունձ: Հայաստանի պայմաններում սովորաբար ստացվում է մեկ հունձ, իսկ յերկրորդ հունձն ստացվում է վորոգվելու դեպքում, առանց վորի՝ սովորաբար, լինում է միմիայն մեկ հունձ:

Կորնգանն անհրաժեշտ է հնձել ծաղկելու սկզբին, ուշ կատարած հնձից ստացված խոտը լինում է կոպիտ, պակաս սննդավետ: Կորնգանի բերքատվութունը Հայաստանում բավականին բարձր է և նայած պայմաններին՝ հեկտարից ստացվում է 3,0-ից մինչև 7,5 տոնն խոտ: Կորնգանն ամենաբարձր բերքատվութեան է հասնում իր կյանքի յերրորդ և չորրորդ տարիներին: Անասունների (սանավանդ վոլխարների) արոտը կորնգանի վրա վատ է անդրադառնում և ուժեղին արածեցնելիս կորնգանը նոսրանում է, վորով և նրա բերքը խիստ պակասում է: Նկատի ունենալով նրա տերևների ստատիկ կերպով թափվելը՝ կորնգանը պետք է հավաքել զգուշութամբ՝ վորքան կարելի չե նրան քիչ շուռ-մուռ տալով և շարքերում նրան ավելորդ կերպով չխառնելով:

Կորնգանի սերմի բերքը հեկտարից կարող է հասնել 4 ցենտներից մինչև 10 ցենտների: Լեռնային բարձր տեղերում կորնգանի սերմնաբուծութունն անհուսալի չե, վորովհետև այդ տեղերում սերմերն ամեն տարի հասունանալ չեն կարող: Կորնգանի վոչ համահավասար հասունանալը և սերմերի սաստիկ կերպով թափվելը՝ սերմերը հավաքելու ժամանակ, պահանջում են խիստ զգուշավորութուն, սերմերն անհրաժեշտ է հավաքել, յերբ ցածրի պտուղները մուգ գույն են ստանում:

Կորնգանի զնասատուներից անհրաժեշտ է մատնանշել լվիճը, վոր հաճախակի վոչնչայն ու նրա ծաղիկները, սերմի բերքը պակասեցնում է: Տերևները զնասվում են ժանգով և արայողով, մանավանդ ավելորդ վորոգման դեպքում: Ժանգով խիստ վնասված

կորնգանի ցանքն անասուններին վաստակար եւ ժանդի եւ արքացողի դեմ պայքարելու յեղանակներէց մեկն այն ե՛ վոր պետք ե անմիջապես կորնգանը հնձել, վորովհետեւ նոր ծիւերը հաճախ հիվանդություններէց դերծ են լինուած: Նախազգուշական միջոցներն են համարվում ցանքի խտությունը նոսրացնելը եւ տանց ջրի լճացման՝ կանոնավոր վտոգում կատարելը:

Հայաստանի չորային շրջանների կորնգանն ամենապիտանութիւն կերամշակույթներից մեկն ե. ցանքն ընդարձակելու համար կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները պետք ե կորնգանի սեփական սերմֆոնդեր ստեղծեն:

### ԻՇԱՌՎՈՒՅՏ (ԴՈՆՆԻԿ)

Իշառվույտն իբրև կերախոտ, համեմատաբար վաղուց չե՛ ինչ մշակվում ե: Այս մշակույթն առանձնապես բարձր զարգացման ե հասել Ամերիկայում: Չնայած անասնաբուժական անտեսություններում իշառվույտի ունեցած բարձր նշանակությանը, այնուամենայնիվ Հայաստանում այդ մշակույթը դեռևս այնքան ել հայտնի չե:

Բույսի նկարագրությունը.— Իշառվույտն ամբողջ Հայաստանում ե մանավանդ նրա չորային շրջաններում տարածված ե վայրի վիճակում իբրև մոլախոտ: Եատ հաճախ իշառվույտ ե հանդիպում նաև ձմեռային չոր արոտներում ե միջին լեռնային գոտու քարքարոտ լանջերում: Իշառվույտը յերկամյա բույս ե: Նա իր կյանքի առաջին տարում առաջացնում ե յերկար ճիւղնական արմատ, վորը 150—200 սանտիմետրի չափ անցնում ե գետնի խորքը ե առաջացնում ե տերեւա-

կալած ե ճյուղավորված ցողուններ, 40—70 սանտիմետր յերկարությամբ: Իշառվույտը սովորաբար առաջին տարին չի ծաղկում: Յերկրորդ տարին նա վաղ սկսում ե զարգանալ ե տալիս ե շատ բարձր ու խիստ ճյուղավորված ցողուններ, վորոնք, նայած պայմանների, հասնում են 170-ից մինչև 350 սանտիմետր բարձրության: Իշառվույտի տերեւները առվույտի տերեւների նման յերեք թեւանի յեն: Նա ունի մանր ծաղիկներ—յերկար փնջերով: Մշակվում ե յերկու տեսակի իշառվույտ, սպիտակ ե դեղին ծաղիկներով:

Սպիտակ ծաղիկներով իշառվույտն ավելի բերքառատ ե: Լորպպաուղը սովորաբար պարունակում ե մեկ սերմ, սակավ դեպքում յերկու կամ յերեք: Սերմերը մանր են ե դեղնավուն:

Կերային յեվ անեստական արժեք.— Կարելի յե աւել, վոր վոչ մի կերաբույս անտեսության մեջ այնպիսի բազմազան գործածություն չունի, ինչպես իշառվույտը: Իշառվույտը կարելի յե ոգտագործել՝ 1) իբրև խոտ, 2) իբրև կանաչ խոտ, 3) սիլոսի համար ե 4) իբրև արոտի խոտ (արոտ): Բացի դրանից, իշառվույտը կարելի յե գործածել իբրև կանաչ պարարտանյութ: Իշառվույտը կորնգանի ե առվույտի նման հրաշալի մեղքատու բույս ե, սակայն ամենից շատ գործ ե անվում իբրև խոտհարքի բույս: Իշառվույտն իր բերքատվությամբ մյուս կերաբույսերից ավելի յե աչքի ընկնում— նրա խոտի միջին բերքը մեկ հեկտարից հասնում ե 50—60 ցենտներին: Իշառվույտն առաջին տարին տալիս ե մեկ, իսկ բարեհաջող պայմաններում յերկու հունձ, Յերկրորդ տարին նա սովորաբար տալիս ե յերկու հունձ: Իշառվույտը բարձր բերքատվության դեպ-

քում տալին և շատ սննդառատ խոտ, վորք պարունակում և 170<sup>0</sup>/<sub>0</sub> սպիտակուցային նյութ: Միևնուշյն պայժաններում իշտովույտի բերքատուլութունը և սննդառատութունը պակաս չեն քան ատվույտիներ և կորնգանիներ: Իշտովույտի խոտն ունի այն թերութիւնը, վոր նամի տեսակ բավականին սուր և յուրահատուկ հոտ և արձակում, վորի պատճառով անասուններն սկզբում այդ խոտը ախորժակով չեն ուտում: Մակայն կենդանիներն իշտովույտի հոտին շուտով ընտելանում են և հետագայում մեծ ախորժակով ուտում են: Իշտովույտը շատ պահանջկոտ բույս չէ, նրան կարելի չէ ցանել ամենաբազմադան հողերում:

Նա չի բանում միմիայն թթու ճահճային հողերում. ամենից լավ բանում և կրառատ փափուկ հողերում: Լավ և աճում նաև աղքատիկ, ավազոտ կամ քարքարոտ հողերում: Նա ունի այն չափազանց արժեքավոր հատկութիւնը, վոր բնորոշակ է լավ աճել աղի հողերում, վորտեղ ուրիշ տեսակի կերախոտերը չեն աճում: Տնտեսապես շատ կարևոր է այն հանդամանքը, վոր աղի հողերում մի քանի տարի իշտովույտ ցանկուց հետո, այդ հողերի աղիութիւնն այնչափ և պակասում, վոր նրանց վրա հաջող կերպով ատվույտ և աճում, վորը մինչ այդ ժամանակ բնով չէր աճում: Իշտովույտը կլիմայի նկատմամբ նույնպես պահանջկոտ չէ: Հայաստանում իշտովույտի մշակութիւնը կարող է տարածվել թե ամենաչորային շոգ շրջաններում, և թե կենդանականի, Լոռու ու այլ ցուրտ շրջաններում: Շնորհիվ յերաշտի նկատմամբ իր ունեցած չափազանց մեծ դիմացկունութեան՝ իշտովույտը կարող է առանց վտուցվելու կամ խիստ չնչին վտուցվումով դար-

գանալ այնտեղ, ուր ատվույտի և կորնգանի մշակումն առանց մեծ վտուցման հնարավոր չէ:

Մտակման սեխնիկան.— Հողն իշտովույտի ցանքի համար պարտատում են՝ խոր աշնանապար կատարելով և դաշար վաղ դարնանը ցաքանելով: Իշտովույտը պարարտանյութի նկատմամբ պահանջկոտ չէ: Հողում կիր չլինելու դեպքում՝ անհրաժեշտ է նրան հանգցրած կիր խառնել, հաշված մեկ հեկտարին 1-ից մինչև 1<sup>1</sup>/<sub>2</sub> տոնն:

Ցանքն անհրաժեշտ է կատարել դարնանը, վորքան կարելի չէ վաղ, վորովհետև իշտովույտի մատղաշ ծիլերն սկզբում հողից բավականին խոնավութիւն են պահանջում: Աշնանացան կարելի չէ կատարել այն շրջաններում, վորտեղ ձմեռները շատ ձյուն և լինում:

Իշտովույտի ցանքը կատարում են շուրջացան, շարքացան և լայնաշար: Շաղաքան կարելի չէ կատարել խիստ քարքարոտ հողերում կամ յերբ ցանվում է անասունների արոտի համար: Շարքացանը կատարվում է խոտ ստանալու, խկ լայնաշար ցանքը՝ սերմ ստանալու համար: Հայաստանի քարքարոտ և ձմեռային դարուփոտ արոտավայրերի պայմաններում կարելի չէ իշտովույտի ցանքը կատարել առանց հողը նախորդ մշակման յինթարկելու՝ սերմը հասարակ կերպով շոգ սալով: Ձմեռային արոտավայրերը բարեխփելու այս միջոցը լայնորեն գործադրվում է Ամերիկայում: Շաղաքանով մեկ հեկտարի վրա անհրաժեշտ է ցանել 25-ից մինչև 35 կիլոգրամ սերմ, խկ շարքացանով՝ 10-ից մինչև 20 կիլոգրամ: Ուովորական շարքացանի դեպքում՝ խոնավ կլիմա ունեցող շրջաններում կարելի չէ մեկ հեկտարի վրա ցանել 15-ից մինչև 18 կիլոգրամ

սերմ, խոկ չորային պտյժմաններում՝ 9-ից մինչև 12 կիրազրամ: Սերմը ցանվում է 2—4 սանտ. խորութեամբ. ավելի խորը ցանք հնարավոր է կատարել ավազային թեթև հողերում: Իշապուլյտի սկզբնական խնամքը կայանում է նրանում, վոր շարքամիջերը, յեթե նրանք մոլախոտերով չափազանց պատածեն, պետք է քաղհոսովին: Իշապուլյտն ամրապնդվելով՝ ինքը լավ կարողանում է մոլախոտերի դեմ պայքարել: Իշապուլյտն ավելի քիչ է յենթակա ֆլասատուների ներգործութեանը, քան առվույտն ու կորնդանը, այդ պատճառով էլ իշապուլյտը միջատներից և սնկային հիվանդութիւններից համեմատաբար ավելի քիչ է ֆլասավում:

Իշապուլյտի հավաքելն ու ոգսագործելը.— Իշապուլյտի խոտը շատ փշրվող է և նրան հավաքելու և չորացնելու ժամանակ վոչ լիակատար զգուշութիւն յերևան բերելու դեպքում՝ տերեւները թափվում են: Ուստի խոտը հավաքելիս պետք է լինել ուշադիր և զգուշ: Իշապուլյտն էլ առվույտի նման, հենց վոր շարքերում թողնում է, պետք է փոցխով կիտել և մի քանի ժամից հետո փոքրիկ փոքրիկ կույտեր կազմել, վորոնց մեջ և նա առանց մեծ կորստի չորանում է: Իշապուլյտը պետք է հնձել նախ քան ծաղկի բողբոջների յերևան գալը: Պետք է հնձել վոչ պակաս քան 10—15 սանտիմետր բարձրութեամբ, վորովհետև այն բողբոջները, վորոնցից նորոգվում են իշապուլյտի ցուլանները, գոնվում են վոչ թե հողի բարձրութեան վրա, այլ ցողունների միջհանգույցներում, գետնից 7—10 սանտիմետր բարձրութեամբ:

Սերմի համար, ուր այդ հնարավոր է, սովորա-

բար թողնում են յերկրորդ հունձը: Սերմը հավաքելու նորմալ մոնետը համարվում է այն ժամանակը, յերբ պտուղների մեծ մասը մուգ կամ սև գույն են ստանում: Իշապուլյտի պտուղը շատ հեշտութեամբ է թափվում, ուստի հավաքելիս մեծ զգուշութիւն է պահանջվում: Ամենից լավ է սերմը հավաքել առավոտը վաղ կամ յերեկոյան, վորովհետև արև ժամանակ նրանք ավելի շատ են թափվում:

Իշապուլյտն անասունների համար իբրև արոտ ծառայեցնելիս, առաջին տարին չպետք է նրան անասուններով ավելի ծանրաբեռնել, վորովհետև արոտի խիստ ծանրաբեռնվածութիւնը բույսի հետագա աճման վրա վտտ է անդրադառնում: Վորպեսզի կարելի լինի յերբեք իշապուլյտ չլիքրած անասունին նրան վարժեցնել, պետք է անասուններին առաջին անգամ իշապուլյտի արոտի դուրս բերել գարնանը, այդ ժամանակ իշապուլյտը լինում է մատղաշ, քնքուշ և խիստ համ ու հոտ չի ունենում. իշապուլյտի աստիճանաբար մեծանալու հետ միասին կենդանին նրան ընտելանում է: Իշապուլյտը գործ է ածվում նաև իբրև սիլոսային մշակույթ: Սիլոսի համար ամենից հաճախ ոգտագործվում է առաջին տարվա հունձը: Իշապուլյտի սիլոսն իր հատկութեամբ համարվում է ամենալավ տեսակի սիլոսներից:

Անհրաժեշտ է հիշել, վոր իշապուլյտի փչացած, հոտած և բորբոսնած խոտի, ինչպես նրանից պատրաստած փչացած սիլոսի գործածութիւնը, չափազանց ֆլասակար է, վորն ուտելուց անասունները կարող են ծանր հիվանդանալ:

Իշապուլյտի մշակույթը մեր կուլանտեսութիւն-

ներն ու խորհանտեսությունները մտցնելը պետք է համարել անհետաձգելի մի ձեռնարկում: Տնտեսությունները կհարողանան իշաութւոյս սերմով ապահովել վայրի իշաութւոյս սերմերի հավաք կազմակերպելով: Վայրի իշաութւոյս ամեն մի տնտեսության դաշտային տարածություններում մեծ քանակութեամբ հանդիպում եւ Առանձնապես արժեքավոր են Հայաստանի չորային շրջանների իշաութւոյս վայրի տեսակները:

**ԿԱՐՄԻՐ ՅԵՐԵՔՆՈՒԿ**

Կարմիր յերեքնուկն իբրև կերարույս մշակվել և Յեվրոպայում դեռևս XIII դարում: Երկայումս կարմիր յերեքնուկի մշակությունն ընդարձակման և յենթարկվում թէ մեզ մոտ՝ Խորհրդային Միութեան մեջ, և թէ արտասահմանում: Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում, կարմիր յերեքնուկն ընդարձակ ծախս չի ընդունել, բայց հետագայում մի շարք շրջաններում այդ բույսը դաշտային խոտացանության մեջ մեծ նշանակություն և ստանալու:

Բույսի կիտրագրութունը.—Կարմիր կամ մարգարետային յերեքնուկը բազմամյա բույս է, ուղիղ հիմնական արմատով, վորի յերկարությունը հասնում է 1,5—2 մետրի: Ունի աղեղնաձև բարձրացած, սովորաբար վոչ ճյուղավորված ցողուններ՝ յերեք թևանի տերևներով: Ճյուղերի ծայրերի դլուխները լինում են կարմիր-ծիրանավուն: Զբոցվող վոքք լոբապտուղջ հասնելիս ծաղկի բաժակների հետ միասին թափվում է: Ունի դեղնավուն կամ մանիշակագույն, ձվաձև մանր սերմեր:

Վայրի կարմիր յերեքնուկը շատ տարածված է Հայաստանի լեռնային մարգագետիններում, մասնավորապես հաճախակի հանդիպում է անտառային շրջանների (Իջևիվանի, Դիլիջանի) մարգագետիններում:

Գեպի կլիման ու հողն ունեցած սպահանջը.—Կարմիր յերեքնուկը ցրտի դիմացող, սակայն ամառվա խիստ շոգին չդիմացող, բավականին խոնավություն սիրող (միայն թե չափավոր) բույս է: Կարմիր յերեքնուկի համար լավագույն հողեր են համարվում վոչ չափազանց ծանր, խորը, հարուստ կավային հողերը: Յերեքնուկը խիստ խոնավ և սառերկրյա ջրերին մոտիկ հողեր չի սիրում: Հայաստանում յերեքնուկի մշակույթի համար լավագույն հողեր են համարվում անտառային շրջանները և լեռնային սևահողերը (Լոռի, Աղձաղան և այլն): Յերեքնուկ ցանելու համար Հայաստանում լավագույն շրջանը համարվում է Լոռվա սարահարթը, վորտեղ այդ մշակույթը կարող է մեծ նշանակություն ունենալ: Յերեքնուկի մշակույթն Աղբարայում հնարավոր է, իսկ Լենինականի շրջանում, վորի կլիման չորային է, յերեքնուկի զարգացման համար բարենպաստ պայմաններ չկան: Կարմիր յերեքնուկի մշակույթի համար լավ շրջաններ են համարվում անտառային շրջանները: Մնացած շրջաններում առանց ջրելու յերեքնուկ ցանելը սխիկ դոքծ է, վորովհետև այդ տեղերում կլիման ցամաքային է և ամառը շոգ:

Կերային յեղ սննդատկան արժեքը.—Ցանելուց հետո կարմիր յերեքնուկը յերկրորդ տարին լիակատար բերք է տալիս, վորը շարունակվում է 2—3 տարի, այնուհետև բերքատվությունը պակասում է: Դաշտային խոտացանության մեջ կարմիր յերեքնուկն ամենաշատը



յերեք տարուց ավելի չի ոգտագործվում: Կարմիր յերեք-  
 նուկի խոտի միջին բերքը համարվում է 6 տոնն, մաք-  
 սիմալ բերքը՝ 10 տոնն: Հայաստանի համապատասխան  
 շրջաններում կարմիր յերեքնուկը կարող է առ 7—8  
 տոնն խոտ: Պակաս բարենպաստ պայմաններում նրա  
 բերքատվությունը 2—3 տոննից ավելի չի լինում:

Յերեքնուկի խոտի կերային արժեքը շատ մեծ է:  
 Ժամանակին հնձված յերեքնուկը պարունակում է  
 13%<sup>0</sup>-ից ավելի սպիտակուցային նյութ, 3%<sup>0</sup>-ից ավե-  
 լի ճարպ:

Յերեքնուկը նույնպես հանդիսանում է լավագույն,  
 աննդատառ և համեղ արոտարույս: Անասուններին  
 յերեքնուկի դաշտում պետք է արածեցնել շատ զգուշ  
 կերպով, վորովհետև դաշտում ցող յեղած ժամանակ տ-  
 քածեցնելիս հաճախ անասունների փորն ուռչում է  
 (տրիպանիտ): Չափազանց շատ արածեցնելը յերեքնու-  
 կի վերանորոգմանը խիստ վնասում է: Յերեքնուկի  
 վրա տռանձնապես վատ է անդրադառնում վոչխարնե-  
 րին շատ արածեցնելը:

Մշակման սխեմիկան.— Յերեքնուկի լավ դարգա-  
 նալու ամենագլխավոր պայմանը հողի խորն աշնանա-  
 վարն է և ապա՝ գարնանը լավ ցաքանելը: Աշնանը  
 յերեքնուկ ցանելը վտանգավոր է, վորովհետև առանց  
 ձյունի սառնամանիքները յերեքնուկի ծիլերի համար  
 խիստ վնասակար են: Յերեքնուկ ցանելու լավագույն  
 ժամանակը գարունն է: Յանքը պետք է կատարել  
 վաղքան կարելի յե վաղ գարնանը, քանի դեռ հողում  
 խոնավության բավականին պաշար կա: Յերեքնուկը  
 ցանում են շաղպան կամ ավելի լավ՝ շարքացան:  
 Մեկ հեկտարում ցանում են 20—25 կիլոգրամ սերմ:

Յերեքնուկի ցանքը պետք է կատարել վորքան հնա-  
 վոր է վոչ խորը—թեթև ցաքանով կամ տափանով: Յե-  
 րեքնուկն զգայուն է դեպի պարարտանյութը: Հայաս-  
 տանի պայմաններում նրա վրա հրաշալի ազդեցություն  
 է ունենում գոմադրը: Վորոգումը յերեքնուկի վրա թույլ  
 ազդեցություն է ունենում, այդ պատճառով էլ նույնիսկ  
 չորային շրջաններում նրան վորոգելը նպատակահարմար  
 չէ: Բացի դրանից, շոգ կլիմայի դեպքում վորոգումը  
 կարող է առաջ բերել սնկային հիվանդություն և միև-  
 նույն ժամանակ շոգի հետևանքով յերեքնուկը թառա-  
 միլուց չպաշտպանել:

Յերեքնուկը պետք է հնձել ծաղկելու սկզբին: Յե-  
 րեքնուկը խոտի համար չորացնելը մեծ դգուշավորու-  
 թյուն է պահանջում, վորովհետև չորացնելու ժամա-  
 նակ թրջվելիս հեշտությամբ փշանում է և շնորհիվ տե-  
 րեների փշրվելու հատկության՝ շատ շուտ-մուտ տալու  
 դեպքում նրանք թափվում են: Այդ պատճառով յերեք-  
 նուկն անհրաժեշտ է չորացնել փոքրիկ փափուկ կույ-  
 տերով և ըստ հնարավորության նրանց շատ շուտ-  
 մուտ չափ:

Յերեքնուկի մշակումը սերմի համար.— Սերմի համար  
 յերեքնուկը մշակում են շաղպան կամ 25—35 տան-  
 սիմեար լայնության լայն շարքացան: Յերեքնուկի  
 սերմի բերքը մեկ հեկտարից ստացվում է 1,5-ից մինչև  
 2,5 ցենտներ: Սերմի համար յերեքնուկ ցանելու նոր-  
 ման ավելի պակաս է, քան խոտի համար ցանելու  
 նորման: Շարքացանի դեպքում մեկ հեկտարին բավա-  
 կան է ցանել մինչև 10 կիլոգրամ սերմ, իսկ լայնաշար  
 ցանքի դեպքում՝ մինչև 4 կիլոգրամ:

Յերեքնուկի սերմերը պետք է հավաքել, յերբ

ծաղիկները մուգ գույն են ստանում և ցողունից բա-  
 վախան հեշտութեամբ բաժանվում են: Յերեքնուկի  
 պտուղները դրված են լինում բաժակի մեջ, այդ պատ-  
 ճառով ել նրանց հավաքել իս պետք և մաքրել: Յերեք-  
 նուկի սերմը մաքրում են ձեռքի արորիչով կամ թե  
 հատուկ մեքենաների միջոցով: Յերեքնուկի լավ սեր-  
 մերն ունենում են 90—95% ծլուճակով: Սերմերի  
 ծլուճակովությունը պահպանվում և 2—3 տարի, վորից  
 հետո արագորեն ընկնում և:

Յերեքնուկի վնասատուները.—Յերեքնուկի վնասա-  
 տուներից ամենից առաջ պետք և հիշատակել դաշտա-  
 յին մկները, վորոնք յերեքնուկի արմատներն ուտելով  
 կարող են նրա ցանքին շատ մեծ վնաս հասցնել: Յերեք-  
 նուկի վնասատուների դեմ կռիվու կարևորագույն մի-  
 շոցը խոր աշնանավարն և և մկների դեմ թունավոր  
 խայծերի միջոցով անմիջապես պայքարելը և այլն:  
 Մնկային հիվանդություններից ամենավտանգավորը  
 յերեքնուկի խոցն և, վորը վնասում և արմատավորելն  
 ու յերեքնուկի թուփը թառամեցնում և: Խոցի դեմ կա-  
 րելի յե լավ պայքարել թե հողին գիպս խառնելով և թե  
 սերմերը ֆորմալինի թույլ լուծույթով հականեխելով:

Յերեքնուկին մեծ վնաս և հասցնում կուսկուտա  
 (պատատուկ) կոչվող պարազիտային բույսը, վորն իբ  
 թեխրով յերեքնուկին վախճակելով ձձում և նրա  
 պնդարար նյութերը: Այս տեսակիտից յերեքնուկը  
 պատատուկից առձուձում և այնպես, ինչպես և արվույսը:

Յերեքնուկի ցանքը պատատուկից դիւժ պահելու  
 համար անհրաժեշտ և ցանքը կատարել այնպիսի սեր-  
 մով, վորն իբ մեջ պատատուկի սերմի խառնուրդ  
 չունենա:

Կարմիր յերեքնուկը խիստ արժեքավոր կերախոտ  
 և, վորի լայն մշակումը Հայաստանի համապատասխան  
 շրջաններում պետք և դառնա մոտակա տարիների  
 գործը:

Ժ Ի Տ Ն Յ Ա Կ

Հայաստանի չորային շրջանների համար լավա-  
 գույն բույս և ժիւանյակը:

Ժիւանյակը համեմատաբար վաղուց չէ, ինչ սկսել  
 են մշակել արասահմանում և մեր Միւլիթյան մեջ:  
 Անդրկովկասում և Հայաստանում առ այժմ ժիւանյակ  
 բոլորովին չեն մշակում, սակայն շնորհիվ իր արժեքա-  
 վոր առանձնահատկությունների, դաշտային անտեսու-  
 թյան մեջ նա մեծ նշանակություն և ունենալու: Վայրի  
 վիճակում ժիւանյակ հաճախակի հանդիպում և Հայաս-  
 տանի չորային շրջաններում, իսկ առանձնապես առատ  
 վայրի ժիւանյակ հանդիպում և Ալազյազի նախալեռ-  
 նային մասերում: Վայրի ժիւանյակի սերմերը հավա-  
 քելով կարելի յե այդ արժեքավոր կերախոտը մտցնել  
 մշակման մեջ:

Բույսի Ախարագրաբյունեն ու նրա սնեսնական ար-  
 մեքը.—Յանցառաթուփ խոտաբույս և, վորն ունի մին-  
 չև 70 սանտիմար բարձրության հասնող ուղիղ ցցված  
 բազմաթիվ (յերբեմն 150) ցողուններ: Ունի դձաձև,  
 փոքր ինչ կոպիտ տերևներ, ծաղկաթիթու թյունը բարդ  
 հասկ և:

Ժիւանյակի արմատները խիտ թելերի ձևով մեկ  
 մետր խորութեամբ անցնում են հողի խորքը: Բացի խիտ  
 կերպով պարզացած արմատի սխտեմից, ժիւանյակն իր  
 արմատավորիկի մոտ ունի կոճղիկներ, վորոնք պա-  
 տած են թաղանթով:

ծաղիկները մուգ գույն են ստանում և ցողունից բազալան հեշտութեամբ բաժանվում են: Յերեքնուկի պտուղները դրված են լինում բաժակի մեջ, այդ պատճառով էլ նրանց հաճաքե իս պեռք և մաքրելու Յերեքնուկի սերմը մաքրում են ձեռքի արորիչով կամ թե հատուկ մեքենաների միջոցով: Յերեքնուկի լավ սերմերն ունենում են 90—95% ծլուսակալություն: Մերմերի ծլուսակալությունը պահպանվում է 2—3 տարի, վորեց հետո արագորեն ընկնում է:

Յերեքնուկի վնասատուները.—Յերեքնուկի ֆլասատուներից ամենից առաջ պետք է հիշատակել դաշտային մկները, վորոնք յերեքնուկի արմատներն ուտելով՝ կարող են նրա ցանքին շատ մեծ վնաս հասցնել: Յերեքնուկի ֆլասատուների դեմ կռիվում կարևորագույն միջոցը խոր աշնանավարն է և մկների դեմ թունավոր խայծերի միջոցով անմիջապես պայքարելը և այլն: Մնկային հիվանդություններից ամենավտանգավորը յերեքնուկի խոցն է, վորը ֆլասում է արմատավզիկն ու յերեքնուկի թուփը թառամեցնում է: Խոցի դեմ կարելի չէ լավ պայքարել թե հողին գիպս խառնելով և թե սերմերը ֆորմալինի թույլ լուծույթով հակամեխելով:

Յերեքնուկին մեծ վնաս է հասցնում կուսկուտա (պատատուկ) կոչվող պարապիտային բույսը, վորն իբ թիկերով յերեքնուկին վաթաթվելով՝ ձծում է նրա ցանդարուր նյութերը: Այս տեսակետից յերեքնուկը պատատուկից սուժում է այնպես, ինչպես և արվույսը:

Յերեքնուկի ցանքը պատատուկից դերձ պահելու համար անհրաժեշտ է ցանքը կտաարել այնպիսի սերմով, վորն իբ մեջ պատատուկի սերմի խառնուրդ չունենա:

Կարմիր յերեքնուկը խիստ արժեքավոր կերախոտ է, վորի լայն մշակումը Հայաստանի համապատասխան շրջաններում պետք է դառնա մտահա տարիների գործը:

## Ժ Ի Տ Ն Յ Ա Կ

Հայաստանի չորային շրջանների համար լավագույն բույս է Ժիանյակը:

Ժիանյակը համեմատաբար վաղուց չէ, ինչ սկսել են մշակել արտասահմանում և մեր Միութեան մեջ: Անդրկովկասում և Հայաստանում առ այժմ Ժիանյակ բոլորովին չեն մշակում, սակայն շնորհիվ իբ արժեքավոր առանձնահատկությունների, դաշտային անտեսություն մեջ նա մեծ նշանակություն է ունենալու: Վայրի վիճակում Ժիանյակ հաճախակի հանդիպում է Հայաստանի չորային շրջաններում, իսկ առանձնապես առատ վայրի Ժիանյակ հանդիպում է Ալադյուզի նախալեռնային մասերում: Վայրի Ժիանյակի սերմերը հաճաքելով՝ կարելի չէ այդ արժեքավոր կերախոտը մոցանել մշակման մեջ:

Բույսի նկարագրությունն ու նրա սնեստական արժեքը.—Ցանցառաթուկ խոտաբույս է, վորն ունի մինչև 70 սանտիմետր բարձրության համող ուղիղ ցցված բազմթիվ (յերբեմն 150) ցողուններ: Ունի դձաձև, փոքր ինչ կոպիտ տերևներ, ծաղկաթիթթությունը բարդ հասկ է:

Ժիանյակի արմատները խիտ թիկերի ձևով մեկ մետր խորությունը անցնում են հողի խորքը: Բացի խիտ կերպով գարգացած արմատի սխտեմից, Ժիանյակն իբ արմատավզիկի մոտ ունի կոճղիկներ, վորոնք պատած են թաղանթով:

Յերաշտի դեպքում կոծորկները սեղմվելով՝ իրենց ծավալով փոքրանում են, սակայն առանց իրենց կենսազործունեությունից զրկվելու: Անձրևներ տեղալիս նրանք արագ կերպով տերևներ են տալիս և արմատներ են արձակում: Սյուպիտով, նույնիսկ սաստիկ յերաշտի դեպքում, բույսը չի փոչնչանում:

Տնտեսության մեջ ժիանյակն ուղտագործում են գլխավորապես իբրև խոտ, յերբեմն ել իբրև արոտաբույս: Իր բերքատվությամբ և սննդարարությամբ ժիանյակի խոտն ունի միջակ հատկություն: Ժիանյակի գլխավոր և ամենաարժեքավոր հատկությունը նրա սաստիկ չորագրիմացկունությունն է, վորը հնարավորություն է տալիս նրան հաջողությամբ մշակել կլիմայական այնպիսի շրջաններում, վորտեղ բաղմամյա կերախոտերի մեծ մասի մշակումը հնարավոր չէ:

Հարավային Հայաստանի հարթավայրերի և նախալեռնային մասերի բոլոր չորային շրջաններում ժիանյակի մշակումն առանց վտուգման միանգամայն հնարավոր է: Ժիանյակի մշակումը միանգամայն հնարավոր է նաև միջին լեռնային գոտու այնպիսի շրջաններում, ինչպիսին են՝ Բասարդեշարի, Լենինականի և այլ շրջանները: Հայաստանի այդ բոլոր շրջաններում ժիանյակի մշակույթը մյուս կերախոտերի մեջ նույն նշանակություն ունի, ինչ վոր կորնդանը լորագրի բույսերի մեջ:

Ժիանյակը դեպի խոնավությունը խստապահանջ չլինելով, խստապահանջ չէ նաև հողի նկատմամբ: Նա կարող է լավ աճել թե աղքատիկ ու քարքարոտ հողերում և թե չոր ու աղի հողերում: Նրա համար լավ կարող են լինել կավային կամ կավախառն շիկ հողերը:

Ավելորդ խոնավությունն ու ստորերկրյա ջրերի մտնելովն իջունը նրա վրա վատ է ազդում:

Ժիանյակն աճել սկսում է վաղ գարնանը և միջին հաշվով 65—70 օրից հետո ծաղկում է: Հունձը պետք է սկսել ծաղկելու սկզբին, վորովհետև դրանից հետո ժիանյակն արագորեն կսպտանում է: Ժիանյակը սովորաբար տալիս է մեկ հունձ, վորի խոտի քանակը մեկ հեկտարից հասնում է 2—5 տոննի: Ժիանյակի խոտն անասունները շատ լավ են ուտում, ժիանյակը յերկարակյաց բույս է և նրա մշակույթը գիմանում է 5—7 տարի:

Մտկվածն սեյսմիկան.— Ժիանյակ կարելի չէ ցանել աշնանը կամ գարնանը: Մակայն վորպեսզի ժիանյակն առաջին տարին յերաշտից չփոչնչանա, ավելի լավ է նրան ցանել աշնանացան հացի հետ միաժամանակ, վորովհետև ցանելուց հետո սկզբնական շրջանում նա հողի բաղալանաչափ խոնավության կարիք ունի: Յեթե ժիանյակը ցանվում է գարնանը, այդ դեպքում անհրաժեշտ է նրան ցանել վորքան կարելի չէ վաղ, վորպեսզի նրա սերմերը խոնավ հողի մեջ ընկնեն: Իսկ յերբ ժիանյակը լավ արմատակալում է, յերաշտը նրա համար այլևս սարափելի չի: Ժիանյակը պահանջում է խորը կատարված աշնանավար և շատ լավ ցաքանված հող: Նրա ցանքը կատարվում է շաղացան կամ շարքացան: Մեկ հեկտարում ցանվում է 5-ից մինչև 12 կիլոգրամ սերմ, ֆայմանները վորքան չորային են, այնքան ավելի քիչ սերմ պետք է ցանել: Ժիանյակի սերմերը շատ մանր են, վորոնց 1—2 սանտիմետրից ավելի խորը չպետք է ցանել, այլապես նրանք կձիկն շատ դանդաղ: Ժիանյակի վրա պարարտանյութը բարեբար ազդեցություն է

ունենում, և յեթե անտեսութիւնը հնարավորութիւնս ունի նրա հողին գոմարը խառնելու, գրանով նրա բերքատուութիւնը կարելի յի ուժգին բարձրացնել:

Սերմի համար թողնվում է յերկրորդ տարվա ժիտնյակը. բարեհաջող տարիներին մեկ հեկտարից ստացվում է մինչև 2,5 ցինտներ սերմ: Ժիտնյակը կարելի յի ոգտագործել վոչ միայն խոտ ստանալու, այլև արոտի համար: Սովորաբար արոտի համար ոգտագործվում է 3—5-ամյա ժիտնյակը: Արոտի համար ժիտնյակ ցանելիս նրան կարելի յի ցանել առվույտի հետ խառնած:

Նկատի ունենալով Հայաստանի համար ժիտնյակի ունեցած կարևորութիւնն ու արժեքը, նրան պետք է յայն մշակման յենթարկել հանրապետութիւնս այն շրջաններում, վորտեղ, ըստ կլիմայական պայմանների մյուս ավելի արժեքավոր տեսակի կերախոտերը գժվար է ցանել: Ժիտնյակն ել իշառվույտի նման կարող է քարքարոտ ու չոր բլուրներում ու լեռնալանջերում յեղած ձմեռային արոտավայրերի քիչ արդշունավետ ու սակավ սննդառատ խոտացանութիւնս բարելավման գործում մեծ դեր խաղար: Այդպիսի տեղերը կարելի յի բարելավել ժիտնյակով, առանց հողը նախապես մշակման յենթարկելու՝ այնտեղ անմիջապես սերմ շաղ տալով:

### ՍՈՒՌԱՆԻ ԽՈՏ

Կերի ճգնաժամի դեմ պայքարելու համար սովորաբար բազմամյա խոտերի մշակումը լավական չէ: Սոցիալիստական տնտեսութիւններում բազմամյա խոտերի հետ միասին պետք է ցանել նաև միամյա կերախոտեր:

Միամյա կարևորագույն կերախոտերից մեկը սուդանի խոտն է: Մինչև հեղափոխութիւնը մարդիկ Հայաստանում սուդանի խոտի մշակույթին ծանոթ չէին: Ներկայումս այս բույսը մեր շատ խորհատնտեսութիւններում և կոլտնտեսութիւններում մշակվում է և հետագայում նա դաշտային մշակույթի մեջ տարածված կերախոտերից մեկն է լինելու:

Բույսի նկարագրաբանը.—Սուդանի խոտը միամյա բարձր բույս է, իր խիստ ճուղավորված և գետնի մեջ խորը գնացող արմատների սիստեմով: Նա ունի ուղիղ ցցված և շատ լավ տերևակալած ցողուններ, վորոնք ունեն 120—200 սանտ. բարձրութիւն. ունի յայն փոված մեծ հուրան (метелка), բարակ փայլուն թեփերով պատած մանր սերմեր: Չափալանց չորադիմացկունութիւնն ու մեծ բերքատուութիւնը սուդանի խոտը դարձնում են չորային շրջանների համար խիստ արժեքավոր կերախոտ:

Հողի յեվ կլիմայի նկատմամբ ունեցած պահանջը.—Սուդանի խոտը հողի նկատմամբ պահանջկոտ չէ, միայն թե խոնավ և ստորերկրյա ջրերին մոտիկ յեղած հողերում և աղի հողերում չի աճում: Ունենալով խիստ զարգացած արմատային սիստեմ, պահանջում է խոթաթափանց հող և ստորահող: Սուդանի խոտը ցածր ջերմաստիճանի կլիմա յերբեք չի սիրում. ցրտերը նրա վրա շատ վատ են ազդում: Սուդանի խոտի համար լավագույն տեղեր հանդիսանում են Հայաստանի չորային շրջանների դաշտավայրերն ու նախալեռնային մասերը: Բարձր լեռնային մասերում նա չի աճում, չորովհետև ցուրտ է. այսպես, նրա մշակույթը Չարաքի իսայում մեծ արդշունք չի տալիս, և այդտեղ նրան ցանելը ուսկի հետ է կապված:

Տնտեսական նշանակությունը.—Այս բույսը մշակվում է զլխավորապես խոտ ստանալու համար: Սոգորաբար նա տալիս է 2—3 հունձ, իսկ բարենհաջող պայմաններում կարող է տալ մինչև 5 հունձ: Բոլոր հունձերի բերքը մեկ հեկտարից հասնում է 5-ից մինչև 12 տոննի: Ամենամեծ բերքը տալիս են առաջին հունձերը, ամենից ավելի՛ յերկրորդը: Սուգանի խոտը շատ լավ է ոգտակար բույս է իբրև կանաչ կեր: Հենց վեր նրա բարձրությունը հասնում է 60—70 սանտիմետրի, նրան կարելի չէ հնձել իբրև կանաչ կեր, վերջից հետո նա արագորեն աճում է: Դառը մաս-մաս ոգտագործելիս կարելի չէ ավելի ամառն ու աշունն ունենալ կանաչ կեր: Սուգանի խոտը կարելի չէ ցանել նույնպես իբրև արոտաբույս: Այդ դեպքում անասուններին պետք է սուգանի խոտի արոտի դուրս բերել ամառն կիսից վաղ շուտ, յերբ նրա արմատները բավականաչափ պնդացած են լինում: Հայաստանում իր ունեցած բարձր բերքատվության պատճառով սուգանի խոտը կարող է մեծ նշանակություն ունենալ նաև իբրև սիլոսային բույս: Նրան սիլոսի համար կարելի չէ գործածել մաքուր վիճակում կամ այլ լրջազգի բույսերի հետ խառնած: Թե իբրև չոր խոտ է թե իբրև սիլոս, կանաչ կեր ու արոտայիտ գործածվող սուգանի խոտը հանդիսանում է խիստ արժեքավոր և սննդաբար կեր: Նա իր մեջ պարունակում է մինչև 17% սպիտակուցային և մինչև 3% ճարպային նյութեր:

Մտահման սեխմիկան.—Կով բերք ստանալու հայեմար սուգանի խոտին հատկացված հողը պետք է լավ մշակվի և նրա վրայի մուխտոտերը մաքրվեն: Աշնանային սոգորական խորը վար կատարելուց հետո:

պետք է վարնանը դառը լավ մշակվի և մուխտոտերից մաքրվի: Սուգանի խոտի ծիլերը ցրտերից պաշտպանելու համար ցանքը պետք է կատարել ուշ վարնանը: Մեկ հեկտարին ցանվում է 10—15 կիլոգրամ սերմ: Ցանքը կատարվում է շարքացանով, վորի արանքները լինում են 50—60 սանտիմետր լայնությամբ, սերմը դրվում է 3—5 սանտ. խորությամբ: Ծիլերը դուրս գալուց հետո հողը փխրեցնելու և մուխտոտերը վերջնականապես վոչնչացնելու համար անհրաժեշտ է շարքերի արանքները յնթարկել մշակման: Առաջին հունձը կատարվում է այն ժամանակ, յերբ հուլյանները յերկվում են, վորովհետև ուշ հնձելուց ստացված խոտը կոտ է լինում:

Սուգանի խոտի սերմերը հասնում են ոգոտոտ սմախն, յեթե սերմի համար թողնված է առաջին հունձը, իսկ յեթե սերմի համար թողնված է յերկրորդ կամ յերրորդ հունձը, այդ դեպքում սերմերը հասնում են աշնանը: Մեկ հեկտարից ստացվող սերմի բերքը սատանվում է 8-ից մինչև 15 ցենտների սահմաններում: Սերմերը հատունացած վիճակում քիչ են թափվում, այդ պատճառով կարելի չէ առանց վորևե նախազգուշացման հավաքել, հատունացած ցողունները հնձելով և ապա կարսելով: Լեռնային մասերում սերմի համար անպայման պետք է թողնել առաջին հունձը, այլապես սերմերը կարող են չհասունանալ:

Սուգանի խոտի ցանքին առանձնապես հաճախակի վատում է մրիկը (ժաղիկներում) և ժանգը (տեղենների վրա): Սուգանի խոտի մրիկի դեմ պայքարելու լավագույն միջոցը համարվում է սերմերը ֆորմալինով ախտահանելը: Ժանգից նախազգուշանալու միջոց հա-

մարվում է ավելի նոսր ցանք կատարելն ու նրան զգուշութեամբ վտոգելը, այնպես վոր ջրի լճացում չառաջանա:

Սուդանի խոտի սիլոսացման դեպքում, մեծ բերք ստանալու համար, հունձը կարելի չի կատարել ծողկելու ժամանակ. այսինքն ավելի ուշ, քան խոտի համար հնձելիս: Խոտի համար հնձած կանաչը չորացնելն ասանձին դժվարություն չի ներկայացնում, քանի վոր խոտը հնձելիս է շուռ-մուռ տալիս տերևները քիչ են թափվում:

Նկատի ունենալով սուդանի խոտի արժեքավոր հատկությունները, վորպես չորադիմացիլուն և բարձր բերք տվող բույս, կարելի չի ասել, վոր նրա մշակույթը Հայաստանի Արաքսի հովտում քիչ վտոգվելու և չորային շրջանների նախալեռնային մասերում առանց յերբեք ջրվելու դեպքում մեծ նշանակություն կունենա:

### ՅԵԳԻՊՏԱՅՈՐԵՆ

Հայաստանի չորային շրջաններում միակայան կեքաբույսերի շարքում մեծ նշանակություն ունի յեգիպտացորենը: Առ այժմ այս բույսի մշակույթը խորհարան տեսություններում և կոլտնտեսություններում քիչ է տարածված, սակայն հետագայում չորային շրջաններում ամուր կերային բազա ստեղծելու գործում յեգիպտացորենը մեծ դեր է խաղալու:

Բույսի նկարագրությունը.— Յեգիպտացորենն ունենում է յերկու տեսակի ծաղիկ՝ արական և իգական: Միևնույն բույսն ունենում է թե մեկ և թե մյուս ծաղիկը: Արական ծաղիկները հավաքված են հոբերուն-

ներով հասունացած բույսերի պաղաթներում, իգական ծաղիկները՝ ձողիկների վրա, վորոնք դանվում են տերևների թևերի արանքում: Յեգիպտացորենը կերախոտերի մեջ իր մեծությամբ հանդիսանում է ամենախոշոր բույսերից մեկը: Մի քանի տեսակների ցողուններն ունեն 2 մետրից ավելի բարձրություն: Յեգիպտացորենի արմատային սիստեմը դեանի աակն անցնում է մեկ մետր խորություն և լայն կերպով տարածվում է իր շուրջը: Յեգիպտացորենի հատիկները լինում են հարթ կամ խորթուրթ և զանազան գույնի: Գոյություն ունեն յեգիպտացորենի շատ բազմազան տեսակներ, վորոնք հարմարեցված են կլիմայական և հողային զանազան պայմաններին և ունեն զանազան տնտեսական արժեք:

Հողի յիվ կլիմայի նկատմամբ ունեցած պահանջը.— Յեգիպտացորենը հիմնականում տաք և չորային շրջանների բույս է, սակայն և այնպես կան նաև յեգիպտացորենի այնպիսի տեսակներ, վորոնց գոյությունը հնաքավոր է նաև ավելի ցուրտ շրջաններում: Լեռնային մասերում, Հողի նկատմամբ յեգիպտացորենը մեծ պահանջներ չունի: Նա չի աճում աղի, խոնավ և ձաճաչյին հողերում: Նրա համար լավագույն հողեր են համարվում խորը, փխրուն և թեթե ավաղախառն սևահողերը կամ թե շեկ հողերը: Խոնավության նկատմամբ յեգիպտացորենը նույնպես մեծ պահանջներ չունի: Նա բավականանում է զարնանային տեղացող փոքրաքանակ անձրևներով, սակայն բավականին ջրի կարիք է ունենում սովորյա հունիս և հուլիս ամիսներին: Այդ պատճառով այն չորային շրջաններում, ուր այդ ժամանակ անձրևներ են գալիս, կտրելի չի առանց վո-

ուղման նրան հրաշալի կերպով մշակել, իսկ մյուս դեպքերում՝ այդ ժամանակ անհրաժեշտ և կատարել արհեստական վտուգում:

**Տնտեսական արժեք.**—Յեզիպտացորենը պատկանում է այն բույսերին, վորոնք տալիս են հսկայական քանակությամբ կանաչ, վորը կարող է ոգտագործվել սիրտի, կերի և արտի համար: Բացի դրանից, նա կարող է ոգտագործվել բարձրորակ հացահատիկ ստանալու համար: Յեզիպտացորենի հատիկը ըստր տեսակի կանաչանիների համար հանդիսանում է իբրև հրաշալի կեր: Նա անփոխարինելի կեր է հանդիսանում բանող անասունների, կովերի, խոզերի և թռչունների համար:

Մանդարար է նաև յեզիպտացորենի խոտը, վորը լավ կեր է հանդիսանում մոշ միայն բանող անասունների, այլ և ձիերի համար: Կանաչ կերի համար ցանված յեզիպտացորենը կարող է քիչ արտատանդեր ունեցող անասունություններն ամբողջ ամառվա ընթացքում ապահովել համեղ և սննդարար կերով: Միայն թե դրա համար զանազան հողամասերում պետք է յեզիպտացորենի տարբեր ժամանակի ցանք կատարել: Սակայն անասնապահության զարգացման բարելավման դրեժում առանձնապես մեծ դեր ունի սիրտի համար ցանվող յեզիպտացորենը: Յեզիպտացորենի սիրտն իր համով և ստացվող մասսայի սննդարարությունը լավագույն սիրտներից մեկն է համարվում:

**Վաճկման սեխնիկան.**—Յեզիպտացորենի բարձր բերք ստանալու անհրաժեշտ պայմանը հողն աչնանը խորը վարելն է (25—27 սանտիմետր): Գորնանը պետք է վորքան կարելի յե հողը լավ ցաքանել: Յեթե հողը շատ

աղբոտ է և զարնանը պատած է լինում մոլախոտերով, ցանկուրեց անմիջապես առաջ անհրաժեշտ է հողը 10—12 սանտիմետր խորությունը վարել և իսկույն և յեթ յերկու յերես ցաքանել: Այս ավելորդ կատարված վարք միանգամայն հատուցվում է բերքի բարձրացմամբ: Յեզիպտացորենի վրա լավ ազդեցություն է ունենում գոմաղբով պարարտացումը: Զպետք է յեզիպտացորենի վաղ ցանք կատարել, վորովհետև շափաղանց վաղ ցանված սերմերը յերկար ժամանակ չձելելով պատում են բորբոսով և նիխում են: Ընդունված է ցանքը կատարել այն ժամանակ, յերբ կեռասն ու բալն սկսում են ծաղկել: Ցանքը կատարում են անպայման շարքացան, ուլելի լավ է լայն շարքերով, վորոնց արանքները միմյանցից 40—50 սանտիմետր հեռավորություն վրա յեն լինում, վորպեսզի այդ արանքները ձիու ողնությունը մշակելու միջոցով կարելի լինի մոլախոտերի դեմ պայքարել: Յուրաքանչյուր հեկտարի վրա ցանվում է 30-ից մինչև 140 կիրգրամ յեզիպտացորենի սերմ: Չորային շրջաններում ավելի քիչ սերմ է գործածվում, քան խոնավ վայրերում: Կանաչ կերի համար յեզիպտացորենը պետք է ցանվի ավելի խիտ, քան սերմի համար: Յեզիպտացորենի խնամքը կայանում է նրանում, վոր հողը պնդանալիս և արմատներ առաջանալիս պետք է նրա ցանքը ցաքանել և շարքերի արանքները փխրեցնել: Մոլախոտերի ուժգին զարգանալու առաջն առնելու համար փխրեցումը ամենաքիչը պետք է կատարել յերկու անգամ: Յեզիպտացորենը բովական առատ բերք է տալիս: Միջին հաշվով նա տալիս է 18-ից մինչև 30 ցենտներ հատիկ: Կերի համար սովորական յեզիպտացորենը հնձվում է գերանդիով կամ մեքենա-



ներով: Յեզիպտացորենը մեկ հեկտարից տալիս է սովորաբար 25—50 տոնն կանաչ կեր: Յեզիպտացորենը պետք է հնձել այն ժամանակ, յերբ գոյանում են բարական հուրանները: Կանաչ մասսան կարելի չէ անմիջապես գործածել իբրև կեր, այդ դեպքում նրան հնձում են կարիքի չափով: Ամենից հաճախ հնձած մասսան յենթարկվում է սիլոսացման: Յեզիպտացորենն իբրև հացահատիկ հավաքելիս չպետք է շտապել շուտ հավաքել, վորովհետև նրա հատիկները չեն թափվում: Խոշոր կոլտնտեսություններում և խորհունտեսություններում յեզիպտացորենի հունձը կարելի չէ կատարել դաշտային բոլոր մշակույթները հավաքելուց հետո: Յեզիպտացորենը հավաքում են նրա ամբողջ բույսի հետ միասին կամ թե նրա գլուխները պոկելով: Յեզիպտացորենը քաղում են ձեռքով կամ թե հատուկ մեքենաներով: Յեզիպտացորենի գլուխները կամ հատիկները պետք է լավ չորացնելուց հետո պահել չոր և քամի խաղացող շենքերում:

Հայաստանի չորային շրջաններում յեզիպտացորենը սոցիալիստական սեկտորի մեք տնտեսություններում բացառիկ նշանակություն է ստանում՝ հացահատիկ, սիլոս և կանաչ կեր ստանալու համար:

## ԱՐԵՎԱՍՏԱՂԻԿ

Ամենալավ սիլոսային բույսերից մեկը համարվում է արևածաղիկը: Մեզ մոտ առայժմ սովոր են արևածաղիկը ցանել բանջարանոցում նրա սերմերը չըթելու համար, կամ թե դաշտում իբրև յուղաբեր բույս: Սակայն ներկայումս թե արտասահմանում, և թե մեզ մոտ արևածաղիկի մշակույթն քաղաքային կերպով է իբրև սիլոսային կերախոր:

Կլիմայի յեվ նողի նկատմամբ ունեցած պահանջը.— Արևածաղիկը հրաշալի կերպով աճում է ցուրտ կլիմա ունեցող վայրերում, այդ պատճառով նրա մշակույթը մեզ մոտ մեծ նշանակություն կարող է ունենալ լեռնային շրջաններում: Արևածաղիկը չորային կլիմային լավ դիմանում է, սակայն յերկարատև յերաշաք նրա վրա վատ է ազդում, ուստի ցածր վայրերում նրան մշակել կարելի չէ վոտոգելով: Ծնորհիվ խորը տարածվող արմատային սիստեմին, արևածաղիկը լավ աճում է թեթև, փխրուն բուսահողերում: Ունի շատ բարձր բերքատվու թյուն:

Տնտեսական նշանակությունը.— Բարեհաջող պայմաններում նրա կանաչ մասսայի բերքը մեկ հեկտարից կարող է հասնել 30—50 տոննի, իսկ միջին բերքը պետք է համարել մեկ հեկտարից 20—25 տոնն: Արևածաղիկի բերքատվու թյունը, պայմաններին դիմանալը և ստացվող սիլոսի հրաշալի հատկու թյունը հիմք են տալիս նրա ցանքը Հայաստանում լայնորեն քաղաքակերտ:

Հողի պատրաստումը.— Արևածաղիկի համար հողի պատրաստու թյունը կայանում է նրանում, վոր պետք է կատարել խորն աշնանավաք և դաքնանը հողը ցաքանել: Արևածաղիկի ցանքը պետք է սկսել այն ժամանակ, յերբ ձյունը հալչելուց հետո առհասարակ հնարավոր է ցանք կատարել: Սիլոսի համար սղապործում են վոչ թե հասած արևածաղիկը, այլ յերբ նա լիակատար բարձրացած է լինում՝ սերմերը լցվելու սկզբին: Ահա թե ինչու սիլոսի համար կարելի չէ հաշտու թյամբ արևածաղիկ ցանել նաև այնպիսի տեղերում, ուր նրա սերմերը չեն հասունանում:

Արևածաղիկը ցանվում է 5 սանտ. խորութեամբ, շարքավիջերի լայնութեանը լինում է 50—60 սանտիմետր, իսկ շարքերում բույսերի հեռավորությունը միմյանցից 10—15 սանտ.: Արևածաղիկը բուսնում է գաբնանից և ամառվա առաջին կեսին ավելի արագ, քան յեղիպտացորենը: Այն ժամանակ, յերբ արևածաղիկն արգեն համարյա հասնի և իր լիակատար բարձրութեանն ու ծաղկել է, յեղիպտացորենը դեռ վաղ է. այդ պատճառով սիրտի համար արևածաղիկն զգալիորեն ավելի վաղ է հասունանում, քան յեղիպտացորենը:

Արեվածաղիկի խնամքը.—Արևածաղիկի խնամքը կարճանում է նրանում, վոր պետք է մուխտոտերը վռչնչացնել և նրան նոսրացնել: Մուխտոտերը պետք է վռչնչացնել (կուլտիվատորներով կամ խորխորով) այն ժամանակ, յերբ դեռևս արևածաղիկի բույսերը վաղ են: Յերբ բույսերը բավականաչափ մեծանում են, նրանք արգեն իրենք մուխտոտերին խեղզում են: Նոսրացումը կատարում են ծիւրը դուրս գալուց 10—15 ու հետո, այսինքն յերբ արևածաղիկը տալիս է իր իսկական տերևների առաջին դուրդը: Մովորաբար միանգամից արմատախիլ են անում արևածաղիկի ավելորդ բույսերը, թողնելով միայն ավելի ուժեղ բույսերը, մեկը մյուսից 15—25 սանտիմետր հեռավորութեան վրա: Նոսրացումը կարելի չէ կատարել նաև յերկու անգամ:

Արեվածաղիկի բաղելը.—Արևածաղիկի քաղելու լավագույն ժամանակն այն է, յերբ նա կիսով չափ ծաղկած է: Դրանից հետո ցածի տերևներն սկսում են մեռնել, ցողունն ավելի չէ կոշտանում և բույսն սկսում է իր կերային հատկությունները կորցնել: Արևածաղիկը սովորաբար քաղում են ձեռքով: Յողունները

կտրում են ամուր, սուր դիրանդիով կամ թե հատուկ դանակներով: Բույսն անհրաժեշտ է քաղել հողի մակերևույթից 15 սանտիմետր բարձրութեան վրա: Քաղված արևածաղիկն անհրաժեշտ է անմիջապես լցնել սայլակներին մեջ, կրել սիրտի տեղը և կտրտել: Արեվածաղիկը տալիս է բարձր վորակի սիրտ:

Արևածաղիկը խիստ զգայուն է դեպի աշնանային ցրտերը, ուստի բերքի իշանալուց խուսափելու համար՝ նրա քաղը պետք է վերջացնել ցրտերն քնկնելուց առաջ:

Յեթե յեղիպտացորենը հանդիսանում է չորային տաք շրջանների սիրտային բույս, ապա արևածաղիկը, շնորհիվ իր արագ աճման, հանդիսանում է գլխավորապես ցուրտ շրջանների բույս: Հաշված է, վոր սիրտացման համար արված արևածաղիկ 1 հեկտար ցանքըն իր հյուսթալի կերով յերեք անգամից ավելի շատ անասուն է ապահովում, քան 1 հեկտար արմատապտուղների ցանքը: Արևածաղիկը մեր անասնապահական խորանտեսությունների և կոյտնտեսությունների դաշտային կերախոտերի մեջ ունի չափազանց կարեւոր նշանակություն և նա մյուս տեսակի կերախոտերի մեջ պետք է դրավի իր պատշաճ տեղը:

#### Վ ի կ

Վիկը Հայաստանի բաղամթիվ սոցիալիստական տնտեսություններում սակավ մշակվող կերախոտերից մեկն է: Վիկն արժեքավոր կերային մշակույթ է և դաշտային խոտացանություն մեջ ունի մեծ նշանակություն:

Բույսի նկարագրությունը.—Վիկը միամյա բույս

և նրա հիմնական արմատն այնքան ուժեղ չէ, վորքան այլ լորագգի բույսերինը: Վիկի ցողունը մատուցալ ժամանակ լինում է ուղիղ կանգնած, իսկ հետո փոփոխվում է, վորը հասնում է 30—60 սանտիմետր և ավելի յերկարության: Տերևները փետրածե են և առջև են բերում 5-ից մինչև 8 զույգ ձվածե տերեխիկներ, վորոնք վերջանում են ճուղավորված բխիկով: Մեզ մոտ մշակվում է յերկու տեսակի վիկ, ցանովի վիկ և բրդոտ վիկ: Ցանովի վիկի ծաղիկները մեկ-մեկ կամ յերկ-յերկու դեռեղված են կարճ ծաղկակոթերի վրա դրված տերևների թևերի արանքներում և լինում են մանիշակագույն, կարմիր, մասամբ ել սպիտակ: Լորագուտները դժածե են և թեք կերպով դարձած դեպի վեր: Մերմերը բավական խոշոր են և մուգ գույնի: Բրդոտ վիկի ցողուններն ու տերևները պատած են բարակ մազիկներով: Ծաղիկները կազմում են խիտ փնջեր, լորագուտները լայն են և համեմատաբար կարճ 3—4 սերմերով:

Հողի յեվ կլիմայի նկատմամբ ունեցած պահանջը.—Վիկը հողի նկատմամբ այնքան ել պահանջկոտ չէ. նա, ճիշտ է, ավազոյին և ստորերկրյա ջրերին խիստ մոտիկ յեղած հողերում չի աճում, սակայն ավազախառն, կավախառն և կավային հողերը կարող են լավ բերք տալ, մանավանդ յիրբ լավ պարարացված են: Հողում յեղած կրի գոյությունը վիկի բերքատուության վրա լավ է ազդում: Վորպես կարճ ժամանակաշրջանում դարգացող բույս, վիկը կլիմայի նկատմամբ ունեցիկ յատկապես յատուկահանց չէ: Կարելի յե ասել, վոր նա ավելի շատ խոնավության կարիք ունի, քան տաքության: Վիկը ծելիուսի 2—3 աստիճանի տակ

արդեն սկսում է աճել և 3—4 աստիճանի ցրտերին դիմանում է: Սովորական, ցանովի վիկը պակաս ցրտադիմացկուն է, քան բրդոտ վիկը, այդ պատճառով ել վերջինս ավելի հաճախ, քան առջինը, ցանում են աշնանը: Բացի դրանից, բրդոտ վիկը լավ աճում է բարձր լեռնամասերում, այնտեղ, ուր ցանովի վիկը չի աճում:

Տնտեսական նշանակությունը.—Վիկը կարող է ցանվել թե գարնանը, և թե աշնանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր սովորական վիկը սաստիկ ցրտադիմուն չի դիմանում, նրան ամենից հաճախ ցանում են գարնանը: Նրա աշնանացանը հնարավոր է միմիայն այն շրջաններում, վորտեղ յերկարատև և տաք աշուն և ձյունաշատ ձմեռ է լինում: Բրդոտ վիկն ամենից հաճախ ցանվում է աշնանը, վորովհետև նա նույնիսկ մինչև 20<sup>0</sup>-ի հասնող սառնամանիքներին լավ դիմանում է: Վիկի ցողունը թույլ է և վոչ մի նեցուկ չունենալով փոփոխվում է գետին: Այդ պատճառով ել մաքուր վիճակով վիկ շատ հազվադեպ են ցանում, այլ սովորաբար գարնանը ցանում են գարու կամ վարսակի հետ խառնած. իսկ աշնանն՝ ամենից հաճախ աշորայի հետ: Իր բխիկներով կաշեկով այդ բույսերին, վիկը բարձրանում է գեպի վեր: Տնտեսություններում վիկը կարելի յե մշակել՝ խոտի, հատիկի և կանանչ կերի համար:

Գարնանացան վիկի մեակման սելսիկան.—Վիկի համար հողը մշակվում է շատ հասարակ յեղանակով: Աշնանը հողը խորը վարում են, իսկ գարնանը՝ լավ ցաքանում: Հողը սերմի համար մշակվելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել մոլախոտերի դեմ կրա-

վերու: Չպետք է աղբն անմէջ ապես սերմացու վիկի տակը լցնել, վորովհետեւ այդ դեպքում աղտոյի առատութեան պատճառով սերմերը համահալասար կերպով չեն հասունանում: Աղքատիկ հողերին վիկի համար լավ է տալ ֆոսֆորային և կալիումի պարարտանյութ՝ առաջինից մեկ հեկտարին 3—4 ցենտներ, իսկ յերկրորդից՝ 15—20 ցենտներ: Վիկի համար լավագոյն պարարտանյութ է հանդիսանում մոխիրը: Մերմ կլիմա ունեցող շրջաններում հնարավոր է վիկի ցանքը կերի համար կատարել խողանայան (հացահատիկները հավաքելուց հետո): Յեթե վիկը ցանվում է կանաչ կերի համար, այդ դեպքում կարելի է վիկի համար նշանակված ամբողջ տարածութունը միանգամից չցանել, այլ ցանքը կատարել մաս-մաս, յուրաքանչյուր մասում մեկ շաբաթ հետո, վորպեսզի կարելի լինի յերկար ժամանակաւնթացքում կանաչ խոտ ունենալ: Յեթե վիկից հետո աշնանալստի է ցանվում, այդ դեպքում վիկը քաղելուց հետո դաշան իսկույն և յեթ պետք է վարել:

Վիկի ցանքը պետք է կատարել վաղ դարձանք՝ հենց վոր հողի վիճակը թույլ տա հողի մշակման անցնել: Ամենից լավ է կատարել շաբաթացան, թողնելով 15—20 սանտիմետր արանք: Այն դաշտը, վորի վրա վիկ է ցանվում, յեթե ուժեղ կերպով պատած է մոլախոտերով, շաբաթմիջերը պետք է մի փոքր ավելի լայն աւնել, վորպեսզի կարելի լինի քաղհանել:

Մեկ հեկտարի վրա ցանվում է 100—120 կիլոգրամ վիկ և 40—50 կիլոգրամ վարսակ (կամ դարի):

Աւանանացան վիկի մտակման սխիսիկան.—Մենք արդեն տասցինք, վոր սովորական ցանովի վիկը աշնա-

նը կարելի է ցանել միմիայն բավականաչափ տաք շրջաններում, իսկ բոլորովին վիկը կարելի է ցանել աշնանը նաև լեռնային ավելի ցուրտ շրջաններում: Աշնանացանի հողի մշակումը պետք է սկսել վաղ: Հողի վարը պետք է կատարել նախորդ բույսը քաղելուց անմիջապես հետո: Խոտը հերկելուց հետո դաշտն, անպայման լավ ցաքանում են: Վիկը պետք է ցանել վաղ աշնանը, վորպեսզի բույսերը ձմռանն անցնեն ամբողջովին ձնով և կարողանան ցրտերին դիմանալ: Յանքի համար ամենահարմար ժամանակը համարվում է ողոտոտոյի վերջը կամ սեպտեմբերի սկիզբը: Աղքատիկ հողերը լավ է պարարտացնել ֆոսֆորային կամ կալիումի պարարտանյութերով կամ մոխրով. վերջինից պահանջվում է 5—10 ցենտներ: Կարելի է ցանել ամեն տեսակի աշնանացան բույսերի հետ միասին: Ամենից հաճախ ցանվում է աշնանացան աշորայի հետ միասին: Յանքն անպայման կատարվում է շաբաթացան, թողնելով 20—30 սանտ. լայնութեան արանքներ: Մեկ հեկտարին վերցնում են 100-ից մինչև 120 կիլոգրամ վիկի սերմ և 30—40 կիլոգրամ աշորայի սերմ:

Վիկը սերմի համար բաղիլը.—Վիկը սերմի համար պետք է քաղիլ այն ժամանակ, յերբ ցածի պտուղները մուգ դույն են ստանում: Չպետք է սպասել, վոր բոլոր պտուղներն ամբողջովին հասունանան, վորովհետեւ այդ դեպքում բազմաթիվ սերմեր կարող են թափվել: Վիկը սերմի մեծ բերք է տալիս: Մեկ հեկտարից հավաքվում է 8-ից մինչև 16 ցենտներ սերմ, իսկ առանձին դեպքերում բերքը հասնում է 25 ցենտներին: Հընձած վիկը վորոշ ժամանակով թողնում են շաբաթում, վոր չորանա և կարիք յեղած դեպքում նրան մեկ ան-

էար շուռ են տալիս, այնուհետև կույտեր են անում և առանց կապելու տանում են կալսելու: Ամենից լավ է սերմի վիկը քաղել մեքենաներով: Սերմը պետք է մաքրել կալսիչ, քամող և դտող մեքենաներով: Վիկի սերմերը իրենցից ներկայացնում են ուժեղ, առողջարար և չափազանց սննդարար կեր: Նրանք իրենց մեջ պարունակում են 27 տոկոսից ավելի սպիտակուցային նյութեր և մինչև 3 տոկոս ճարպ:

Վիկը խոտի յեվ կանաչ կերի համար բաղելը.—Վիկը խոտի համար պետք է քաղել ծաղկելու ամենասկզբին: Վիկի խոտը չորանում է բավական դանդաղ և բացի այդ, վիկը արժեքավոր տերևներ շատ է կորցնում, այդ պատճառով վիկը խոտի համար պետք է չորացնել զգուշութամբ՝ առանց շարքերն ավելորդ տեղը շուռ-մուռ տալու: Յնթե վիկը հնձված է ժամանակին, բարեհաջող պայմաններում կարելի չէ հուսալ, վոր նույնիսկ յերկրորդ հունձ կստացվի: Հարկ յեղած պարարտացումը կատարելու յեվ հողի խոնավության դեպքում հեկտարից հեշտությամբ ստացվում 30—40 ցենտներ խոտ: Վիկի խոտը շատ սննդարար է և բոլոր տեսակի կենդանիները մեծ ախորժակով են ուտում: Նա իր մեջ պարունակում է 14,2 տոկոսից ավելի սպիտակուց և 2 տոկոսից ավելի ճարպ:

Վիկը կանաչ կերի համար սովորաբար սկսում են քաղել ծաղկման ժամանակ և շարունակում են մինչև լոբապտուղ առաջանալու սկիզբը: Կոլանտեսության և խոհանոտեսության մեջ կանաչ կեր ստանալու համար պետք է առանձին հողամասերում մի քակի ժամկետով անընդհատ վիկի խառնուրդ ցանել: Յերը հմն լողամասի վիկը հնձվում է, այդ ժամանակ մյուս

հողամասն է հասնում և այլն, և կենդանիներն ամբողջ զարնան ու ամռան ընթացքում և աշնան սկզբին ունենում են վիկի կանաչ կեր: Անասուններին կանաչ վիկ կերցնելիս, պիտի նկատի ունենալ, վոր այդ վիճակում վիկը մեծ քանակությամբ ջուր է պարունակում և նրան պետք է միշտ զգալի քանակությամբ ջուր կեր խառնել. ամենից լավ է հարդ խառնել:

Վնասատուները.—Վիկի վրա յերբեմն մեծ քանակությամբ ալբացող և ժանդ է յերևում: Այդ դեպքում պետք է վիկն անմիջապես քաղել, վորպեսզի չեթե հնարավոր է, ստացվի վնասատուներից ազատ ահլուկ (отавы): Դրանցով սաստիկ վարակված վիկը անասունների համար վնասակար է: Վիկի սերմերին վնասում են թրթուրները, կնճիթավոր ու լոբակեր միջատները:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
ԿԵՐԱՆՈՏԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ . . . . .	3
1. Ցանովի առվույտ (յոնջա) . . . . .	6
2. Կորնուան (եսպարցետ) . . . . .	16
3. Իշառվույտ (դոննիկ) . . . . .	20
4. Կարմիր յիրեքնուկ . . . . .	26
5. Ժիտնյակ . . . . .	31
6. Սուղանի խոտ . . . . .	34
7. Ցեզիպտացորեն . . . . .	38
8. Արևածաղիկ . . . . .	42
9. Վիկ . . . . .	45

Այս գրքից 9-րդ գլխից շար 50  
 բողոքում 40-34 րկից փոք օրս  
 իրան շին Բեջան-գործիչ

17/10 51 Մարտ

«Ազգային գրադարան»



NL0286451

18450